«ԱՄԲԵՐԴ» ՄԱՏԵՆԱՇԱՐ 4

Հետազոտական խմբի ղեկավար՝
ՋՈՅԱ ԱՂՎԱՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, դոցենտ

Հետազոտական խմբի անդամներ՝
ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱ

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 331.556.4
ԳՄԴ 65.9(2)240
Ա 940

Հրատարակության է երաշխավորել
ՀՊՏՀ գիտական խորհուրդը

Մասնագիտական խմբագիր՝
Մարկոսյան Ա. Խ.
տ.գ.դ., պրոֆեսոր

Գրախոսներ՝ **Մովսիսյան Մ. Է.**
տ.գ.թ., դոցենտ
Նազարյան Գ. Ա.
տ.գ.թ., դոցենտ

Խմբագրական խորհուրդ՝
Աթոյան Կ. Լ. (նախագահ)
տ.գ.դ., պրոֆեսոր
Վարդանյան Գ. Ի.
տ.գ.դ., պրոֆեսոր
Սուվարյան Յու. Մ.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր
Ավետիսյան Ս. Ս.
տ.գ.դ., պրոֆեսոր

Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ/
Ա 940 Ջոյա Թադևոսյան և ուրիշ.; Մասն. խմբ՝ Ա.Խ. Մարկոսյան. –Եր.: Տնտեսագետ, 2014 - 80 էջ.- («Ամբերդ» մատենաշար):

Աշխատուժի, որպես արտադրության կարևորագույն գործոնի միգրացիայի հիմնախնդիրը մշտապես գտնվել և գտնվում է տնտեսագետ-հետազոտողների ուշադրության կենտրոնում: Աշխատուժի միգրացիան հասարակության զարգացմանը զուգահեռ ենթարկվում է որակական և քանակական փոփոխությունների, ծագում են նոր պատճառներ, գործոններ և պայմաններ, որոնք էլ պայմանավորում են այդ փոփոխությունները: Անկախ նրանից, որ աշխատուժի միգրացիայի հիմնախնդիրները բազմակողմանիորեն քննարկվում են թե՛միջազգային և վերպետական կառուցների, թե՛ պետական օրենսդիր և իրավասու մարմինների և կազմակերպությունների կողմից, դրանք գտնվում են նաև գիտական շրջանակների և փորձագետների ամենօրյա ուսումնասիրության տիրույթում, այնուամենայնիվ դեռևս մնում են բազմաթիվ չլուծված հարցեր, որոնք պահանջում են լրջագույն մոտեցումներ՝ ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով:

Սույն հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել արտաքին տնտեսական կապերն ուսումնասիրող մասնագետների կողմից, մասնավորապես՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտության բակալավրական և մագիստրոսական դասընթացներում, ինչպես նաև ասպիրանտների գիտահետազոտական աշխատանքներում:

ՀՏԴ 331.556.4
ԳՄԴ 65.9(2)240

ISBN 978-9939-61-083-2

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2014 թ.
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

1. ՀՀ միգրացիոն գործընթացների գնահատականը. համառոտ ակնարկ 8

2. Աշխատանքային միգրացիայի ընտրանքային հետազոտության մեթոդաբանությունը 12

3. Աշխատանքային միգրացիայի հետազոտության արդյունքների վերլուծությունը 18
   3.1. Ընդհանուր տեղեկություններ հարցվողների վերաբերյալ 18
   3.2. Քաղաքացի աշխատանքային միգրանտների վերաբերյալ վիճակագրական հարցման արդյունքների վերլուծությունը 26

4. Միգրացիայի համայնքային հետազոտություն 61

Եզրակացություններ և առաջարկություններ 66

Օգտագործված գրականության ցանկ 73

Ամփոփումներ 74

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքային միգրացիան աշխարհում ներկայումս ամենանշանակալից միգրացիոն հոսքերից մեկն է: Միացյալ ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական հարցերի վարչության տվյալներով 2013 թ. դրությամբ միջազգային միգրանտների ընդհանուր թիվը 232 մլն մարդ էր, որի 74%-ը աշխատանքային միգրանտներ էին[1], այն դեպքում, երբ 2010 թ. 214 մլն միգրանտների 90%-ն էր լքել հայրենի բնակավայրը աշխատելու նպատակով[2]: Վերջին տասնամյակների ընթացքում, ինչպես ընդունված է ասել, «տրանսֆորմացիոն» երկրներում շարունակաբար իրականացվող քաղաքական, տնտեսական և սոցիալական խորը, հաճախ նաև արմատական բարեփոխումները, իսկ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո նաև զարգացած երկրներում ընթացող սոցիալ-տնտեսական գործընթացները, հանգեցրին հասարակական կյանքի արմատական վերափոխումների, ինչն էլ դարձավ բնակչության, հատկապես՝ նրա աշխատունակ մասի միգրացիոն նոր ալիքի ձևավորման շարժառիթ: Միգրացիոն գործընթացների որակական փոփոխությունները լրացվել են նոր գծերով. եթե նախկինում ուղեղների ներգրավման օջախներ էին առավելապես զարգացած երկրները, ապա այժմ զարգացող երկրները ևս ձգում են խելոքներին:

Աշխատանքային միգրացիայի հանրային աճող նշանակությունն էլ հենց կարևորում է դրա տեսամեթոդաբանական իմաստավորման, տարածքային տեղաշարժի քանակական աճի, ինչպես նաև հարակից որակական փոփոխությունների, միգրացիոն գործընթացների ընդհանուր օրինաչափությունների և առանձնահատկությունների բացահայտման և համակարգային ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Իրականացված հետազոտության արդիականությունը պայմանավորված է հատկապես վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունից բնակչության տարերային արտագաղթի, ոչ օրինական աշխատանքային միգրացիայի աճող տեմպով, որը ծնում է բազմաթիվ սպառնալիքներ, այդ թվում՝ որակյալ աշխատանքային ռեսուրսների կորուստ, ժողովրդագրական վիճակի վատթարացում, ազգային անվտանգության խաթարում՝ կապված սահմանամերձ բնակավայրերից բնակչության աննախադեպ արտագաղթի հետ: Պարզորոշ և հստակ չէ նաև ՀՀ միգրացիոն քաղաքականությունը՝ հատկապես ոչ օրինական միգրացիայի, աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանվածության, գործատուների և միգրանտների բավարար տեղեկացվածության առումով:

---

[1] http://esa.un.org/unmigration/wallchart2013.htm

[2] International labour migration. A rights-based approach, Geneva, International Labour Office, 2010, p.1

ՀՀ բնակչության որակական և քանակական բնութագրիչների վրա ընդհանրապես, իսկ աշխատանքային ռեսուրսների վրա մասնավորապես, արտագաղթի ազդեցությունը միանշանակ գնահատել հնարավոր չէ: Եթե արտագաղթը դիտարկենք որպես աշխատանքի ներքին շուկայի լարվածությունը թուլացնող գործոն, ապա սոցիալ-տնտեսական զարգացման արդի փուլում բարձր որակավորում ունեցող մասնագետների և բանվորական ներուժի կորուստը տեսանելի ապագայում կարող է հանգեցնել մարդկային կապիտալի չբավարարվող պահանջարկի լուրջ հիմնախնդիրի: Բնակչության զանգվածային արտագաղթի երկրներում մարդկային կապիտալի կորստի «համարժեքը», կարծեք թե, դառնում են միգրանտների դրամական փոխանցումները դեպի հայրենիք:

Անշուշտ, հատկապես նոր շուկաներ ձևավորող երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մեջ աշխատանքային միգրանտների դրամական փոխանցումներն էական և բավական ակտիվ դեր են խաղում: Որպես սոցիալ-տնտեսական զարգացման գործոն՝ բնակչության դրամական փոխանցումներն իրենց կարևորությամբ արտաքին ֆինանսավորման երկրորդ աղբյուրն են՝ ուղղակի ներդրումներից հետո: Դրանք հսկայական ազդեցություն ունեն աշխատանքի ներքին շուկայի, անձնական սպառման, ներմուծման, պետական բյուջեի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների այլ ոլորտների վրա: Վերջին հաշվով, դա խթանում է, որպեսզի արտասահմանից ստացված եկամուտները հայրենիքում ծախսվեն սպառման ավելի առաջադիմական և քաղաքակիրթ ձևերի վրա, իսկ հետագայում նաև բարձրացնեն դրանց ներդրումային ակտիվությունը:

Ուստի իրականացված հետազոտության ***նպատակը*** աշխատանքային միգրացիայի ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, հետևանքների, միգրացիայի դրդապատճառների, մեկնման նպատակի, միգրանտների դրամական փոխանցումների օգտագործման ուղղությունների ուսումնասիրությունն է, ինչպես նաև ՀՀ 2008–2013 թթ. արտաքին միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ պաշտոնական վիճակագրության հրապարակած տվյալներին զուգահեռ օբյեկտիվ, անաչառ և հնարավորինս հավաստի գնահատականների ստացումը:

Հետազոտության շրջանակներում առաջադրված ***խնդիրներն*** են՝

- ՀՀ միգրացիոն հոսքերի սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների ուսումնասիրություն՝ սեռ, տարիք, ընտանեկան դրություն, կրթություն, ժամանման երկիր և այլն:
- Էմիգրացիոն հոսքերի ուղղությունների, մեկնման երկրում միգրանտների կարգավիճակի, զբաղմունքի, գործունեության ոլորտի, եկամուտների աղբյուրի և այլնի պարզաբանում:

- Աշխատանքային միգրացիայի ինտենսիվության ու արդյունավետության հետազոտություն՝ ըստ բնակչության սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական առանձին խմբերի:
- Միգրացիայի նպատակների վերլուծություն՝ մշտական բնակություն, աշխատանք, ընտանիքի վերամիավորում, կրթություն և այլն:
- Աշխատանքային միգրանտների զբաղվածության հիմնական ոլորտների բացահայտում:

Ուսումնասիրության ***օբյեկտը***՝

1. տնային տնտեսություններն են և ՀՀ աշխատանքային միգրանտները,
2. որոշ լեռնային և դաշտավայրային համայնքների ղեկավարները:

Ուսումնասիրության ***առարկան*** տնտեսական զարգացման ժամանակակից փուլում աշխատանքային միգրացիայի գործընթացների ու դրանց սոցիալ-տնտեսական շարժառիթների և հետևանքների մասին տնային տնտեսությունների, ինչպես նաև համայնքների ղեկավարների կարծիքն է:

Հետազոտության ***վարկածները***՝

1. ՀՀ աշխատուժի միգրացիոն հոսքերի ակտիվացման դրդապատճառներից գլխավորը քաղաքականն է:
2. Աշխատանքային միգրացիան և դրան հաջորդող տրանսֆերտները նպաստում են հայրենիքում բնակվողների սոցիալ-տնտեսական վիճակի էական բարելավմանը:

1 ՀՀ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

1980–1990-ական թվականների սահմանագլխին Հայաստանում տեղի ունեցած արտակարգ իրադարձությունները, ինչպես նաև քաղաքական ու սոցիալտնտեսական բնույթի արմատական վերափոխումները չէին կարող չազդել բնակչության վերարտադրության գործընթացի և հատկապես միգրացիայի վրա: Միայն 1989–1990 թթ. ընթացքում Հայաստանի բնակչության միգրացիոն շրջանառությունը գերազանցեց 1 մլն մարդը, իսկ արտաքին միգրացիայի շրջանառության գործակիցը կազմեց տարեկան 150 պրոմիլ՝ գերազանցելով 1980-ական թվականների մակարդակն առնվազն 10 անգամ: Այս հանգամանքը գնահատելով որպես հանրապետության արտաքին միգրացիոն իրադրության կայունության հիմքերի քայքայման սկիզբ՝ միաժամանակ նշենք, որ այդ ընթացքում ունեցավ 150–170 հազար մարդու մեխանիկական հավելաճ:

Իրադարձությունների հետագա ընթացքը ոչ միայն չէր կարող նպաստել Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրադրության (այդ թվում՝ արտաքին միգրացիայի) կայունության վերականգնմանը, այլև դրա կորուստը դարձրեց անդառնալի: Տնտեսական ու սոցիալական ոլորտների գրեթե կաթվածահար վիճակը, մարդկանց սովորական կենսաձևի հիմքերի քայքայումը, աղետի գոտու արագ վերականգնման հույսի կորուստը, բնակչության զանգվածային աղքատացումը, ըստ էության, անխուսափելի դարձրին ոչ միայն զանգվածային միգրացիոն ալիքների ձևավորումը, այլև ներգաղթի նկատմամբ արտագաղթի ալիքի ճնշող գերակշռումը: Ընդ որում, արտագաղթի ալիքն այնքան նշանակալից էր, որ դրա որակական ու քանակական ցուցիչներն արդեն իսկ վերաճել էին ժողովրդագրական այլ գործընթացների՝ ծնելիության, մահացության, ամուսնության և ամուսնալուծության շարժի վրա ազդող ինքնուրույն գործոնի:

Պաշտոնական վիճակագրության տվյալներով ՀՀ առկա բնակչության թվաքանակը վերջին քսան տարիներին (1991–2011 թթ.) նվազել է 21,3%-ով կամ 777,1 հազ. մարդով, ընդ որում դա պայմանավորված է եղել միայն արտաքին միգրացիայի բացասական մնացորդով՝ 1120,3 հազ. մարդ, քանի որ նշված ժամանակաշրջանում բնական հավելաճի շնորհիվ բնակչության թվաքանակն ավելացել է 343,2 հազ. մարդով: Հարկ է նկատել, որ արտաքին միգրացիայի ծավալների պաշտոնական գնահատականները հանրության լայն շրջանում հարուցում են որոշակի կասկածներ:

Ավելորդ չէ վերհիշել ոչ վաղ անցյալի (1970–1990 թթ.) ՀՀ բնակչության վերարտադրության կարևոր փոփոխականների մակարդակներն ու դինամիկայի միտումները: Այսպես, բնակչության ժամանակակից վերարտադրողական վարքագծի ձևավորումը և դրանից ածանցյալ ծնելիության մակարդակը պայմանավորված էին ընտանիքի բարօրության առանձնահատկություններով, ամուսնաընտանեկան հարաբերությունների համալիրով: Բնակչության ներ- և արտաընտանեկան կողմնորոշումների միջև գոյացել էր որոշակի հավասարակշռություն, որը նպաստում էր ընտանիքի բավականին բարձր հեղինակության պահպանմանը, ամուսնության հուսալիությանը: Այսպես՝

- 30–34 տարեկանում դեռևս ամուսնացած չէր տվյալ տարիքային կոհորտայի 9.2%-ը՝ ներկայիս 23.2%-ի փոխարեն,
- պայմանական սերնդի 100 կանանցից 90-ը չէր դադարեցնում վերարտադրական գործունեությունը մինչև երկրորդ երեխայի ծնունդը, 50-ը՝ մինչև երրորդի ծնունդը, և միայն 12-ն էր գնում չորրորդ և բարձր կարգի ծնունդի: Ներկայումս պայմանական սերնդի 100 կանանցից առաջնեկին ունենում են 80-ը, երկրորդին՝ 60-ը, երրորդին՝ 25-ը, չորրորդ և բարձր կարգի երեխաներին՝ միայն 6-ը,
- պտղաբերության տարիքի (15–49 տարեկան) սահմանագլխին հասած մեկ կնոջ հաշվով ծնելիության գումարային գործակիցը 2.3-ից մինչև 2.5 էր, որը բավարար էր քիչ ընդլայնված վերարտադրության համար, ներկայումս այդ գործակիցը հավասար է 1.6-ի, ինչն ապահովում է սերնդափոխությունը ընդամենը 75%-ով,
- անգամ բարձր մանկամահացության պայմաններում նորածինների կյանքի սպասվող միջին տևողությունը 1987 թ. 74 տարի էր, որը ոչ միայն ամենաբարձրն էր ԽՍՀՄ-ում, այլև շատ չէր զիջում այդ տարիների համաշխարհային լավագույն արդյունքներին՝ 76–78 տարի,
- բնակչության ներհանրապետական միգրացիան առավելապես բաղկացած էր «գյուղ-քաղաք» և «ծայրամասեր-կենտրոն» տեսակի հոսքերից, իսկ արտաքին միգրացիան ընթանում էր բացասական մնացորդով (տարեկան միջին հաշվով 10 հազար մարդ կամ հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի մոտ 0.3%-ն ու բնական աճի տարեկան մեծության 15–18%-ը), որը պայմանավորված էր այդ տարիներին ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման տեմպի որոշ նվազմամբ:

Ակնհայտ է, որ թե՛ առաջինը (ներհանրապետական միգրացիան) և թե՛ երկրորդը (արտաքին միգրացիան) բնույթով բարենպաստ համարվել չէին կարող: Սակայն դրանց քանակական համեստ չափանիշները և, որ հատկապես կարևոր է, աճման միտումների բացակայությունը բացառում

էին քիչ չէ թե շատ նշանակալից բացասական հետևանքների հնարավորությունը:

Հենց վերոնշյալ վերարտադրության ձևը կարելի էր օպտիմալ համարել ինչպես հասարակական շահերի, այնպես էլ բնակչության հնարավորությունների և ցանկությունների տեսանկյունից: Ընդհանուր գծերով, այսպիսին էին ժողովրդագրական իրողությունները, երբ 1980-ական թվականների վերջին Հայաստանի Հանրապետությունը թևակոխեց անցումային ժամանակաշրջանը:

1990-ական թվականների սկզբին ՀՀ-ում սկսվեց ժողովրդագրական ճգնաժամի առաջին փուլը, երբ ծնելիության նվազման հետևանքով բնակչության վերարտադրության նետտո գործակիցը (1993 թ.՝ 0,975) իջավ սերունդների պարզ փոխարինման մակարդակից (1.0) ցածր: Նշված ժամանակաշրջանն է հենց ապաբնակեցման (դեպոպուլացման) սկիզբը՝ թեև անմիջապես չհանգեցրեց բնակչության բնական աճի նվազմանը:

Ապաբնակեցումը երկար ժամանակ թաքնված էր՝ ապահովելով բնակչության բնական աճ, այսինքն՝ ծնունդների թիվը դեռ շարունակում է գերազանցել մահերի թվին: Սակայն, այդ բնական աճն ինքնին է՝ պայմանավորված բնակչության տարիքային կառուցվածքում կուտակված ժողովրդագրական աճի ներուժով: Պարզ է, որ այդ ներուժը հավերժ չէ՝ աստիճանաբար մարում է: Ըստ մեր հաշվարկների՝ ժողովրդագրական ճգնաժամի երկրորդ փուլը, այսինքն՝ բնակչության բնական նվազումը, ամենայն հավանականությամբ, կսկսվի 2019–2020 թթ., երբ ծնունդների թիվը կնվազի մինչև 30 հազարը, իսկ մահերի թիվը փոքր-ինչ կգերազանցի դրան: Մոտավորապես 21-րդ դարի կեսին ժողովրդագրական ճգնաժամը կհասնի իր երրորդ՝ առավել վտանգավոր փուլին, երբ տարիքային կառուցվածքների տեղաշարժերը նախկին ժամանակահատվածների համեմատ կդառնան ոչ նպաստավոր՝ ակնհայտորեն խորացնելով բնակչության ապաբնակեցման գործընթացը: Բոլոր նշված փոփոխություններն, անկասկած, կունենան տնտեսական, սոցիալական և քաղաքական լրջագույն հետևանքներ: Ակնհայտ է, որ առաջիկա տարիներին արտաքին միգրացիայի ներկայիս միտումների պահպանումը միայն կարագացնի ժողովրդագրական ճգնաժամի նշված փուլերի հաջորդումը: Ավելին, որոշ ժողովրդագիրներ արդեն իսկ այսօր ստեղծված իրավիճակն անվանում են «ժողովրդագրական աղետ»:

Ժողովրդագրական տեղեկատվության անհավաստիությունը ետխորհրդային Հայաստանում ձեռք է բերել ինքնուրույն և բավական սուր դրված հիմնախնդրի երանգավորում: Ավելին, անգամ մարդահամարի անցկացումը և դրա արդյունքների ողջ համալիրի հրապարակումն ու դրանց հիման վրա բնակչության ընթացիկ հաշվառման հետահայաց գնահատականները և համապատասխան ժողովրդագրական ցուցանիշների վերահաշ-

վարկումը բոլորովին չեն նշանակում տվյալ հիմնախնդրի լիակատար և վերջնական լուծում, քանի դեռ չի բացառվում գալիք տարիների նոր՝ զգալի շեղումների կուտակման հնարավորությունը:

Այսպես, անվստահելի են բնակչության ընթացիկ հաշվառման այն գնահատականները, ըստ որոնց 2002–2011 թթ. ընթացքում ՀՀ բնակչության արտաքին միգրացիայի բացասական մնացորդի գումարային մեծությունը կազմել է ընդամենը 59.0 հազար մարդ[3]: Դրանից կրկնակի ավելի են ցուցադրում արտաքին ուղևորափոխադրումների վերաբերյալ տվյալները, որոնք ստացվում են ՀՀ հսկիչ անցագրային կետերից: Մինչ 2010 թ. ուղևորահոսքերի գրանցումը նույնպես աչքի չի ընկել բարձր հավաստիությամբ, հատկապես 2002–2007 թթ. համար, երբ արտաքին միգրացիայի սալդոն ցուցադրվել է դրական նշանով[4]:

Սակայն հակառակն է ապացուցում 2008 թ. անցկացված ընտրանքային հետազոտությունը, ըստ որի 2002–2007 թթ. ընթացքում ՀՀ-ից էմիգրացված և հետազոտության պահին նրա սահմաններից դուրս գտնվողների թվաքանակը 205.6 հազ. մարդ է[5]: Ակնհայտ է, որ միայն ՀՀ բնակչության ռեգիստրի լիարժեք և կարգավորված գործունեության դեպքում է հնարավոր ստանալ բնակչության թվաքանակի և կազմի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն, սակայն դրա փաստացի իրագործումը ոչ մեկ տասնամյակ կպահանջի:

Անկախացումից ի վեր՝ ՀՀ-ում արտաքին միգրացիայի ուսումնասիրությանը նվիրվել են մեկ տասնյակը գերազանցող հետազոտություններ: Դրանց մեծամասնությունն իրականացրել են պաշտոնական վիճակագրության մարմինները կամ նրանց մասնակցությամբ: Սույն հետազոտության հեղինակային խումբը կողմ է այն կարծիքին, որ թեպետ ՀՀ արտաքին միգրացիայի ուսումնասիրությունները հրատապ են, բայց հանրությունը որպես առավել արժանահավատ է ընդունում այն հետազոտությունները, որոնք իրականացվում են անկախ ինչպես իշխանության գործադիր մարմիններից, այնպես էլ պետական կամ օտարերկրյա ֆինանսավորումից:

[3] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2012, էջ 116:
[4] www.smsmta.am/?menu_id=18
[5] ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ ԱՎԾ, Երևան – 2008, էջ 40:

2 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԸՆՏԱՆԻՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Որպես ընտրանքային հետազոտության *դիտարկման օբյեկտ* կամ, այլ կերպ ասած՝ գլխավոր համակցություն հանդես է եկել ՀՀ բնակչությունն ըստ 2011 թ. մարդահամարի ՀՀ վարչատարածքային բաժանման արդյունքների: Դիտարկման օբյեկտի նման ընկալումը թույլ է տալիս հեշտությամբ լուծել նաև հետազոտության միավորի հարցը: Այդպիսիք պետք է լինեին նշված համակցության առանձին ներկայացուցիչները, այսինքն՝ մարդը կամ բնակիչը: Ակնհայտ է, որ համակցության այդ միավորները չէին կարող միաժամանակ լինել նաև դիտարկման միավորներ, քանի որ այդ դեպքում հետազոտության շրջանակներից մեխանիկորեն դուրս կմնար ուսումնասիրվող համախումբը, այսինքն՝ 2008 թ-ից հետո ՀՀ-ից մեկնած և դեռևս չվերադարձած բնակչությունը:

Վերջիններիս իրենց ներկայիս բնակավայրերում (արտասահմանում) անմիջապես դիտարկելու տեսական, իսկ հնարավորության բացակայության պայմաններում՝ հետազոտության շրջանակներում նրանց ընդգրկման միակ ուղին անուղղակի դիտարկումն էր: Այդ պատճառով էլ որպես ընտրանքային հետազոտության *դիտարկման միավոր* հաստատվեց ոչ թե անհատը (մարդը, բնակիչը կամ քաղաքացին), այլ տնային տնտեսությունը, որից հնարավոր է քիչ թե շատ հավաստի ու ամբողջական տեղեկատվություն ստանալ ոչ միայն սեփական տնտեսության բացակա անդամների, այլև լրիվ կազմով բացակա անմիջական հարևան ընտանիքների (տնային տնտեսությունների) մասին:

Քանի որ հետազոտության նպատակի մեջ չէր մտնում ստանալ արտաքին միգրացիայի իրական ծավալներն ըստ առանձին վարչատարածքային բաժանումների և ըստ այլ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների, ապա ընտրանքի ձևավորման մեթոդաբանության մշակման ժամանակ հաշվի չի առնվել բնակչության՝ ըստ որոշ հատկանիշների (բնակության վայր, տնային տնտեսության մեծություն և այլն) բավարար ներկայացուցչությունը (ռեպրեզենտատիվություն) ապահովելու պահանջը: Ելնելով վերոնշյալից՝ մշակվել և կիրառվել է ընտրանքի իրականացման յուրահատուկ մեթոդական համակարգ:

Առաջին հերթին, գլխավոր համակցությունը, հաշվի առնելով ըստ վարչատարածքային բաժանման վերջինիս սոցիալ-տնտեսական զարգացման տարբերություններն ու առանձնահատկությունները, մենք բաժանել ենք

38 շերտի (ստրատայի), որից 28-ը քաղաքային են, իսկ 10-ը՝ գյուղական: Նշենք նաև, որ քաղաքային շերտերի ուղիղ կեսը բաժին է ընկնում Երևանին: Շերտերի և դրանցում ընդգրկված, այսինքն դիտարկված տնային տնտեսությունների բաշխումն ըստ ՀՀ մարզերի ներկայացված է թիվ 1 աղյուսակում:

Աղյուսակ 1

Ընտրանքում ընդգրկված շերտերի և հարցված տնային տնտեսությունների բաշխումն ըստ ՀՀ մարզերի և բնակության վայրի

Մարզ	*Շերտերի թիվը*			*Տնային տնտեսությունների թիվը*		
	Քաղաք	*Գյուղ*	*Ընդամենը*	*Քաղաք*	*Գյուղ*	*Ընդամենը*
Երևան	14	0	14	287	0	287
Արագածոտն	1	1	2	20	18	38
Արարատ	1	2	3	20	35	55
Արմավիր	1	4	5	20	80	100
Գեղարքունիք	1	1	2	20	20	40
Լոռի	2	0	2	40	0	40
Կոտայք	2	1	3	40	20	60
Շիրակ	2	0	2	40	0	40
Սյունիք	2	1	3	30	20	50
Վայոց ձոր	1	0	1	20	0	20
Տավուշ	1	0	1	20	0	20
Ընդամենը	**28**	**10**	**38**	**557**	**193**	**750**

Շերտերի կամ հաշվային տեղամասերի ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով հարցազրուցավարների համար (տվյալ դեպքում՝ սույն հետազոտական խմբի 4 մասնակիցների) յուրաքանչյուր մարզի քաղաքային կամ գյուղական համայնքներում տվյալ հարցում քիչ թե շատ իրազեկ աջակից ունենալու փաստը, ինչը բխել է հետազոտական խմբի ֆինանսական ծախսեր կատարելու սահմանափակ հնարավորությունից: Ավելորդ չէ նշել, որ տվյալների հավաքագրումը իրականացվել է բավականին սեղմ ժամկետներում՝ 2013 թ. հուլիսի 15-ից մինչև սեպտեմբերի 1-ը:

Երկրորդ հերթին յուրաքանչյուր հաշվային տեղամասում առանձնացվել է դիտարկման ենթարկվող տնային տնտեսությունների կլաստերը (փուն-

ջը): Տվյալ հետազոտությունում որպես կլաստեր (կամ սերիա) քաղաքային բնակավայրերում ծառայել է որոշակի շենքը (կամ շենքերը), իսկ գյուղական վայրերում՝ որոշակի փողոցը (կամ փողոցները):

Վերջապես, յուրաքանչյուր կլաստերից ընտրվել է 20–22 տնային տնտեսություն, որոնց անդամներից առնվազն մեկը հետազոտության պահին գտնվել է Հայաստանի սահմաններից դուրս: Այդպիսինների ցանկը քաղաքային բնակավայրերում ճշգրտվել է բնակկոմունալ շահագործման բաժինների (կամ համայնատիրությունների), իսկ գյուղական բնակավայրերում՝ գյուղապետարանների քաջատեղյակ աշխատակիցների միջոցով, որոնց էլ հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Հարկ է նշել, որ տնային տնտեսությունների հոծ (կոմպակտ) բնակեցման սկզբունքի վրա հիմնված կլաստերային ընտրությունը հնարավորություն է ընձեռել նվազագույնի հասցնելու ինչպես հարցվողների, այնպես էլ էմիգրացվածների մասով ուսումնասիրվող սոցիալ-ժողովրդագրական բոլոր բնութագրիչների կառուցվածքային գնահատականների ներկայացուցչական սխալները: Հաշվի առնելով, որ հետազոտության մեթոդաբանությունը նախատեսում էր նաև վերահսկման հնարավորություն (հարցաթերթիկի որոշ հարցերի միտումնավոր ձևակերպումներով), ուղղված ակնհայտորեն անվստահելի տեղեկատվությամբ հարցաթերթիկների հայտնաբերմանը և շրջանառությունի հանելուն, նպատակահարմար գտնվեց ընտրանքի ամփոփման և վերջնական արդյունքների ստացման համար դիտարկված միավորներից թողնել 750-ը: Այս թիվը հանրապետության տնային տնտեսությունների ընդհանուր թվի 0.1%-ն է կամ Հայաստանի սահմաններից դուրս առնվազն մեկ անդամ ունեցող տնային տնտեսությունների ավելի քան 1%-ը:

Ընտրանքի նկարագրված մեխանիզմը, ինչպես ցույց են տալիս համապատասխան հաշվարկները, ապահովում է էմիգրացվածների բավական բարձր ներկայացուցչականություն, երբ սահմանային սխալը 0.99 հավանականությամբ հատկանիշի մասի (տեսակարար կշռի) նկատմամբ առավելագույնը շեղվում է 2–4%-ի շրջանակներում: Նման կերպով ընտրված 750 տնային տնտեսությունները ուղղակի անմիջական հարցմամբ տեղեկություններ են տվել ոչ միայն իրենց ընտանիքի բացակա անդամի, այլև անմիջական հարևանությամբ բնակվող այն ընտանիքների մասին, որոնք լրիվ կազմով են մեկնել Հայաստանից՝ անկախ նրանից, վաճառե՞լ են իրենց բնակարանը, թե՞ ոչ, ինչպես նաև բնակարանում այլ ազգականների (կամ վարձով ապրողների) առկայությունից:

Աղյուսակ 2

Էմիգրանտների բաշխումն ըստ հարցված և հարևան տնային տնտեսությունների

Անձանց թիվը	Տնային տնտեսություններ՝ ըստ էմիգրանտների հոսքի թվի	Այդ թվում										Էմիգրանտների ընդհանուր թիվը
		Սեփական տնտեսությունից					Հարևան տնտեսությունից					
		1 անձ	2 անձ	3 անձ	4 անձ	Էմիգրանտների թիվը	1 անձ	2 անձ	3 անձ	4 անձ	Էմիգրանտների թիվը	
1 անձ	450	450	-	-	-	450	-	-	-	-	-	450
2 անձ	155	-	155	-	-	310	-	-	-	-	-	310
3 անձ	62	52	7	3	-	75	7	52	-	-	111	186
4 անձ	45	37	5	3	-	56	3	5	37		124	180
5 անձ	18	12	3	2	1	28	1	2	3	12	62	90
6 անձ	9	-	4	3	2	25	-	2	3	4	29	54
7 անձ	6	-	-	4	2	20	-	-	2	4	22	42
8 անձ	5	-	-	-	5	20	-	-	-	5	20	40
Ընդամենը	**750**	**551**	**174**	**15**	**10**	**984**	**11**	**61**	**45**	**25**	**368**	**1352**

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից՝ 750 հարցվածները տեղեկություններ են հայտնել իրենց ընտանիքներից էմիգրացված 984 անձանց վերաբերյալ, ընդ որում՝ 551-ը կամ 73.5%-ը բացակա 1 անդամի, իսկ 174-ը կամ 23.2%-ը՝ երկու անդամի մասին: Ավելին, յուրաքանչյուր հինգերորդը (142 ռեսպոնդենտ) տեղեկություններ է հաղորդել նաև իր հարևան տնային տնտեսության ամբողջ կազմով բացակայող չափահաս՝ թվով 368 անձանց վերաբերյալ, ինչը հետազոտության շրջանակներում ընդգրկված էմիգրանտների ընդհանուր թվաքանակում 27.2% է:

Հարցման համար մշակվել են երկու ինքնուրույն հարցաթերթիկներ: Առաջին կամ անմիջական դիտարկման հարցաթերթիկը ուղղված էր հիշյալ 750 տնային տնտեսությունների այն անդամներին, որոնք սիրալիր պատասխանեցին հարցազրուցավարների հարցերին: Հարցաթերթիկը բաղկացած էր յոթ հարցերից՝ պարզելու համար հարցման ենթարկվածների բնակության վայրը, սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները (սեռը տարիքը կրթական մակարդակը զբաղվածության կարգավիճակ) և արտագաղթելու մտադրությունը:

Երկրորդ՝ անուղղակի դիտարկման հարցաթերթիկը ուղղված էր ՀՀ-ից էմիգրացվածների սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական բնութագրիչների բացահայտմանը, բաղկացած էր 16, ընդ որում՝ առավելագույնս պարզ հարցերից: Դրանք են՝ տնային տնտեսության բացակա անդամների կամ

հարևան տնային տնտեսության լրիվ կազմով բացակա չափահաս անդամների սեռը, տարիքը, ընտանեկան դրությունը, կրթական մակարդակը, մեկնման տարեթիվը, մեկնման վայրը, մեկնման նպատակը և դրդապատճառները, մեկնման հիմունքը, մեկնման վայրում զբաղվածության կարգավիճակը և գործունեության ոլորտը, Հայաստան վերադառնալու մտադրությունը, Հայաստանում գտնվող բարեկամներին էմիգրանտներից դրամական փոխանցումների կատարելու փաստը, դրամական փոխանցումների օգտագործման նպատակները և տնային տնտեսության եկամուտների մեջ դրանց տեսակարար կշիռը (Հավելված 1):

Արտաքին միգրացիայի քանակական և որակական բնութագրիչների մակարդակներն ու առանձնահատկությունները բնորոշելու, ինչպես նաև հնարավոր հետևանքները գնահատելու, փոփոխման միտումները բացահայտելու առումով, էմիգրացվածների շարքում իր նշանակությամբ հստակորեն առանձնանում է էմիգրացիայի ընտանեկան-անհատական հատկանիշի բաշխումը: Հայաստանյան զանգվածային արտահոսքի դեպքում դա ունի հետևյալ կառուցվածքը (գծապատկեր 1)՝



Գծապատկեր 1

Էմիգրացիայի ընտանեկան-անհատական հատկանիշի բաշխումը[6]

Քանի որ անհատական և ընտանեկան արտագաղթը որակապես տարբեր են, ընդ որում ոչ միայն նպատակների և ծնող պատճառների, այլև հետևանքների՝ այդ թվում նախ և առաջ վերադարձի (ռեէմիգրացմամբ) ավարտվելու-չավարտվելու հավանականության առումով, ապա վերոնշյալ կառուցվածքի առանձին բաղկացուցիչների հարաբերակցությունները հնարավորություն են ընձեռում որոշակի պատկերացում կազմելու թե՛ երևույթի բնույթի, զարգացման միտումների, և թե՛ հնարավոր հանգուցալուծումների մասին:

[6] Եգանյան Ռ., Կոյումջյան Կ., Ետխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները, Երևան 2004, էջ 36:

Արտաքին միգրացիային նվիրված ընտրանքային հետազոտության տվյալները վկայում են, որ 1/2 հարաբերությունը հետևողականորեն աճել է[7]: Այսպես, եթե 1996 թ. այն կազմել է 0.8 միավոր, ապա 1999 թ.՝ 1.0, իսկ 2001 թ. արդեն 1.1 միավոր: Սա, ինչպես նաև 2.1/2.2 հարաբերակցության փոփոխությունը հօգուտ առաջինի, նշանակում է, որ էմիգրացիան վերաճել է առավեապես ընտանեկան երևույթի: Կարելի է ենթադրել, որ նոր մեկնածների թվում ընտանիքով մեկնողների մասնաբաժնի գերակշռելու, ինչպես նաև կիսված ընտանիքների, հիմնականում ոչ թե Հայաստանում, այլ արտերկրում վերամիավորվելու գործելակերպի հետևանք այս փաստը վկայում է, որ ժամանակավոր կենցաղային և սոցիալ-տնտեսական էմիգրացիայի երևույթը, իրադրության առողջացման համարժեք միտումների բացակայության պայմաններում՝ ներկայումս ավելի ու ավելի մեծ չափով է ստանում անվերադարձ արտագաղթի բնույթ:

Անվերադարձ էմիգրացիային անցում կատարելու ծանրակշիռ ապացույցներից մեկը էմիգրանտների թվաքանակում սեռային կառուցվածքի տեղաշարժերն են: Այսպես, եթե 1996 թ. հետազոտության տվյալներով արտագաղթածների ծավալում կանայք մոտ 40%-ն էին, ապա 1999 թ. և 2001 թ. հետազոտության տվյալներով համապատասխանաբար՝ 42.0% և 43.5%: Իսկ կանայք, որպես կանոն, արտագաղթում են ողջ ընտանիքի կամ ընտանիքի որևէ անդամի հետ, ինչը նվազեցնում է նրանց վերադարձի հավանականությունը:

Նշենք նաև, որ 2007 թ. հետազոտությունում կանանց տեսակարար կշիռը էմիգրացվածների ընդհանուր ծավալում ունեցել է փոքր մասնաբաժին՝ 21.5%: Դա հետևանք էր այն բանի, որ հետազոտությունում չէին դիտարկվել լրիվ կազմով մեկնած ընտանիքների անդամները: Նշված թերությունը բնորոշ է վերջին տասնամյակում կատարված գրեթե բոլոր հետազոտություններին: Սովորաբար էմիգրանտների մեջ կանանց տեսակարար կշռի մեծությունն է ցանկացած ընտրանքային հետազոտության որակի գնահատման կարևոր չափանիշը: Վերջին երկու մարդահամարների արդյունքները նույնպես վկայում են, որ 1991–2001 թթ. և 2001–2011 թթ. միջմարդահամարային ժամանակահատվածներում արտաքին միգրացիայի բացասական մնացորդում կանանց մասնաբաժինը 44.6%-ից դարձել է 47.2%:

[7] Կարապետյան Ս. Ա., Եգանյան Ռ. Ս., Շահնազարյան Ն. Վ., Հայաստանի բնակչության միգրացիան ետխորդային ժամանակահատվածում, UNFPA, Երևան, 1996: Հայաստանի բնակչության 1991-1998 թթ. արտաքին միգրացիոն գործընթացների հետազոտություն, ՀՀ վիճակագրության նախարարություն, TACIS, Եվրոստատ, Երևան, 1999: Ջեկույց ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության, ՀՀ ԱՎԾ, 2002:

3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Ընդհանուր տեղեկություններ հարցվողների վերաբերյալ

Հարցվողներին վերաբերող բնութագրիչների ուսումնասիրությունը հետաքրքրական է այն առումով, որ նրանք, որպես կանոն, էմիգրանտների ընտանիքի անդամներ են, ուստի և հարցվողների սեռատարիքային կազմի, զբաղմունքի, արտագաղթի մտադրության, ըստ բնակության վայրի նրանց բաշխվածության մասին տեղեկատվությունը կարևոր է միգրացիոն հոսքերի հետագա ակտիվացման գնահատման տեսանկյունից:

Այսպես, հարցվողների կամ տնային տնտեսությունների 38,3%-ը բաժին է ընկել Երևան քաղաքին, 61,7%-ը՝ մարզերին: Ընդ որում, հարցվողների 74,3%-ը քաղաքային բնակչություն է, իսկ 25,7%-ը՝ գյուղական (գծապատկեր 2): Ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում հարցվողների գերակշռող մեծամասնությունը կանայք են: Եթե քաղաքային բնակավայրերում կանայք հարցվողների ընդանուր թվի 71,4%-ն են, որից գրեթե 50%-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին, ապա գյուղական բնակավայրերում այդ ցուցանիշը 68,4% է (հավելված 2):



Գծապատկեր 2

Հարցվողների տեսակարար կշիռը՝ ըստ բնակավայրի և սեռի (%)

Հարցվողների բաշխումը՝ ըստ տարիքի և սեռի: Հարցման ենթարկված 220 տղամարդկանց թվում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն 60 տարեկան և բարձր (37,3%) և 45–59 տարեկան տարիքային խմբերը (34,1%), իսկ կանանց թվում 45–59 տարեկանների խումբը՝ 38,7% (հավելված 3): Մինչև 30 տարեկան տարիքային խումբը հարցման ընթացքում ունեցել է պակաս ակտիվություն՝ ընդամենի 11,3%, իսկ 45 տարեկան և ավելի բարձր տարիքի ռեսպոնդենտների տեսակարար կշիռը հարցվողների ընդհանուր թվաքանակում 68.1% է: Ըստ առանձին տարիքային խմբերի և սեռի հարցվողների բաշխումը ներկայացված է գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3

Հարցվողների բաշխումը՝ ըստ տարիքի և սեռի

Հարցվողների բաշումը՝ ըստ զբաղվածության: Հարցվողների զբաղվածության կարգավիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն վարձու աշխատողները՝ 24,0%, ամենափոքրը՝ գործատուները (2,0%): Հարցաթերթիկում նշված մնացած ոլորտներում հարցվող զբաղվածները բաշխված են գրեթե հավասարաչափ՝ տատանվելով 11,6–16,4%-ի սահմաններում (գծապատկեր 4): Միևնույն ժամանակ, գյուղացիական տնտեսություններում և գործունեության այլ ոլորտներում ինքնազբաղվածներին բաժին է ընկնում հարցվողների 26,8%-ը (հավելված 4):

Հարցվողներից գործազուրկ են 16,5%-ը, ընդ որում՝ գործազուրկ են հարցված տղամարդկանց 13,6%-ը, կանանց՝ 17,7%-ը: Կանանց թվաքանակում փոքր չէ նաև տնային տնտեսուհիների տեսակարար կշիռը՝ 20,8%: Բարձր է նաև խնամքի տակ գտնվողների (թոշակառուների) տեսակարար կշիռը՝ 15,3%, ինչը բացատրվում է հարցվողների ընդհանուր թվաքանակում 60 և ավելի բարձր տարիքի անձանց մեծ բաժնեմասով՝ 30,8%:

Հարցվողների կրթական մակարդակը շատ բարձր է, քանի որ նրանց 36,9%-ը ունի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն, ընդ որում՝ վարձու աշխատողների մեջ այդպիսիք 58,9% են: Հարցվողների մեջ մեծ է ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների թիվը՝ 257 մարդ կամ 34,3%, իսկ տարրական և ցածր կրթություն ունեցողները կազմում են հարցվողների ընդհանուր թվի ընդամենը 0,3%-ը: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հարցվող գործազուրկների 45,5%-ը ունեն բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն (հավելված 5):



Գծապատկեր 4

Հարցվողների բաշխումը՝ ըստ զբաղվածության կարգավիճակի և սեռի

Հարցվողների արտագաղթելու պատրաստականությունը: Արդեն նշվել է, որ 1991–2011 թթ. ընթացքում ՀՀ-ից արտագաղթել է մոտ 1,2 մլն մարդ, ինչը ժամանակաշրջանի սկզբի նկատմամբ կազմում է 32,8%, այսինքն՝ մոտ մեկ երրորդը: Նման ցուցանիշ չի արձանագրել ինչպես նախկին ԽՍՀՄ-ի ոչ մի հանրապետություն, այնպես էլ մեր տարածաշրջանի որևէ այլ երկիր:

Հետազոտության արդյունքների ամփոփումը տագնապի տեղիք է տալիս նաև այն առումով, որ հանրապետության առկա բնակչության էմիգրացիոն ներուժը դեռևս ոչ միայն հեռու չէ սպառված լինելուց, այլ, ամենայն հավանականությամբ, ունի աճի միտում: Մյուս կողմից՝ պարզ է, որ էմիգրացիոն ներուժը չի կարող անվերջ աճել, քանի որ այդ գործընթացում առավել ակտիվորոն մասնակցող սեռա-տարիքային առանձին կոհորտաների (կոնտինգենտի) կառուցվածքային տեղաշարժերը կարող են տեղի ունենալ մինչև որոշակի օպտիմալ (որոշ իմաստով նաև՝ կրիտիկական) աստիճանի հասնե-

լը: Այսինքն՝ դա այն վիճակն է, երբ արտագաղթելը տնտեսապես դառնում է ոչ շահավետ. դոնոր երկրի աշխատանքի շուկայի լարվածության մեղմացման հետևանքով նվազում է գործազրկությունը՝ աստիճանաբար նպաստելով աշխատավարձերի բարձրացմանը, իսկ ռեցիպիենտ երկրներում աշխատանքի շուկան գերհագեցնում է՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

Էմիգրացիոն ներուժը սովորաբար գնահատվում է առկա բնակչության՝ մշտական բնակավայրից երբևիցե մեկնելու մտադրությամբ: Բավական ուշագրավ է ՀՀ-ում վերջինիս դինամիկան: Այսպես, եթե 1998 թ. էմիգրացվելու որևէ մտադրություն չուներ ներկա բնակչության 87%-ը, 2008 թ.՝ 83,1%-ը, ապա 2013թ.՝ արդեն 62,4%-ը: Հարկ է նշել, որ 1998 թ. և 2008 թ. արդյունքները վերաբերում են ընտրանքում ներառված բոլոր տնային տնտեսությունների անդամներին, իսկ 2013 թ. արդյունքները՝ միայն այն Տ/Տ անդամներին, որոնցից առնվազն մեկն արդեն գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս՝ երեք ամիս և առավել տևական ժամկետով:

Նշված համակցությունները որոշակի չափով անհամադրելի են, քանի որ երկրորդ համախմբի անդամների էմիգրացիոն ակտիվությունը բարձր է այն պարզ պատճառով, որ իրենց Տ/Տ արդեն մասնակցել է միգրացիայի կազմակերպման գործընթացին, այսինքն՝ էմիգրացման մտադրության առաջացման, էմիգրացման վայրի և մեկնման եղանակի ընտրության, ինչպես նաև ապագա աշխատանքի բնույթի, վարձատրության և բնակարանային պայմանների մասին նախնական պայմանավորվածությունների ձեռքբերման փուլերին: Սակայն միայն նշված հանգամանքով չի կարելի բացատրել 2008–2013 թթ. էմիգրացվելու մտադրության «առաջխաղացման» փաստը:

Աղյուսակ 4-ի տվյալներից երևում է, որ վերջին հինգ տարիների ընթացքում ՀՀ-ից մեկնելու մտադրություն ունեցողների բաժինը 5,3%-ից դարձել է 31,9%: Մեկնելու մտադրության աճի մասին լավագույնս է վկայում նաև այն, որ ուղևորահոսքերի սալդոյի 2010–2012 թթ. ծավալները (տարեկան՝ 40 հազարից ավելի) մոտ երկու անգամ գերազանցում են 2008–2009 թթ. մեծությունները, իսկ ինչ վերաբերում է 2013 թ. սալդոյին, ապա ըստ առաջին կիսամյակի հաշվառման (-95,0 հազար մարդ)՝ այն արդեն 28,6%-ով գերազանցում է 2012 թ. համապատասխան ժամանակահատվածի մեծությանը:

Հարցվողների 15,6%-ը հայտնել է արտագաղթելու հաստատակամության մասին, իսկ 16,3%-ը արտագաղթը համարում է հավանական: Արտագաղթելու մտադրություն չունեն ռեսպոնդենտների 52,9%-ը, ևս 9,5%-ը երկիրը լքելու որոշումը համարում է քիչ հավանական, վերջապես, այս հարցում դեռ չեն կողմնորոշվել հարցվողների ընդամենը 5,7%-ը :

Աղյուսակ 4

S/S անդամների բաշխումն ըստ ՀՀ-ից մեկնելու մտադրության, %

Մեկնելու մտադրություն	*2008 թ.*[8]	*2013 թ.*
Այո	**5.3**	**31.9**
ա/ որոշակիորեն այո	2.3	15.6
բ/ երևիթե այո	3.0	16.3
Ոչ	**83.1**	**62.4**
ա/ ոչ	76.3	52.9
բ/ ավելի շուտ ոչ	6.8	9.5
Դժվարացել են պատասխանել	**11.6**	**5.7**
Ընդամենը	**100.0**	**100.0**

Այժմ անդրադառնանք 2013 թ. էմիգրացիոն ներուժի ձևավորման սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունների և օրինաչափությունների լուսաբանմանը: Այսպես, վստահաբար արտագաղթելու մտադրություն չունեն հարցվող կանանց 51,7%-ը, իսկ տղամարդկանց 55,9%-ը (հավելված 6): Գծապատկեր 5-ից երևում է, որ հարցված կանանց էմիգրացիոն ներուժն ավելի քան 5 տոկոսային կետով բարձր է տղամարդկանց տվյալ ներուժից, սակայն դա չի վերաբերում բոլոր տարիքային խմբերին:



Գծապատկեր 5

Հարցվողների արտագաղթելու պատրաստականությունը՝ («այո» ասածների տեսակարար կշիռը) ըստ սեռի և տարիքի

[8] ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2008, էջ 37:

Այսպես, մինչև 45 տարեկան տղամարդկանց մոտ 45%-ը պատրաստվում է արտագաղթել, ինչը 5–7 տոկոսային կետով բարձր է կանանց համապատասխան տարիքի էմիգրացիոն ներուժից: Նշենք նաև, որ, եթե մինչև 60 տարեկան հարցված կանանց էմիգրացվելու պատրաստականությունը բավական կայուն է՝ գտնվելով 37,3-ից մինչև 39,6 տոկոսի սահմաններում, ապա տղամարդկանց շրջանում այն 45 տարեկանից հետո գրեթե կրկնակի նվազում է: Կանանց էմիգրացիոն ներուժի բարձր լինելը բացատրվում է հանրապետության սահմաններից դուրս ընտանիքի մյուս անդամներին վերամիավորվելու մտադրությամբ: Միևնույն ժամանակ հարցվողների տարիքի մեծացման հետ նվազում է նրանց արտագաղթելու ցանկությունը:

Եթե հարցվողների տարիքի և էմիգրացիոն ներուժի մակարդակների միջև դիտվում է հակադարձ կապ, ապա կրթական մակարդակի հետ կապն արդեն ուղիղ է: Այսպես, եթե բարձրագույն, թերի բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողների 34,4%-ից մինչև 35,1%-ն են պատրաստվում արտագաղթելու, ապա ընդհանուր միջնակարգ և ընդհանուր հիմնական կրթություն ունեցողների 27,0%-ից մինչև 28,8%-ն է հայտնել նման ցանկություն (հավելված 7): Հետբուհական՝ մագիստրոսական կրթություն և գիտական աստիճան ունեցող 14 հարցվողներից 12-ը (կամ 85,7%-ը) արտագաղթել չի ցանկանում: Սա բավական հուսադրող ցուցանիշ է, այն առումով, որ կրթական բարձր մակարդակ ունեցող անձինք իրենց ապագան որոշակիորեն կապում են հայրենիքի հետ:



Գծապատկեր 6

Հարցվողների արտագաղթելու պատրաստականությունը՝ ըստ զբաղվածության կարգավիճակի («այո» ասածների տեսակարար կշիռը, տոկոսով)

Ըստ զբաղվածության կարգավիճակի էմիգրացիոն միջինից բարձր (31,9%) ներուժ գրանցվել է ոչ գյուղատնտեսական գործունեությամբ ինքնազբաղվածների՝ 42,8%, տնային տնտեսուհիների՝ 42,8% և գործազուրկների (31,9%) շրջանում (գծապատկեր 6), իսկ արտագաղթելու մտադրություն չունենալու առումով առաջատարն են գործատուները՝ 86,7% և թոշակառուները՝ 77,0% (հավելված 8):

Ըստ մարզերի արտագաղթելու պատրաստականությունը բավական տարբերակված է: Եթե Վայոց ձոր մարզում արտագաղթելու մտադրություն չունեն հարցվողների 35.0%-ը, ապա Արարատի, Լոռու և Տավուշի մարզերում նման մտադրություն չունեն հարցվողների արդեն 80%-ից ավելին: Ըստ առանձին մարզերի էմիգրացիոն ներուժի մասին տվյալները ներկայացված են գծապատկեր 7-ում:



Գծապատկեր 7

Հարցվողների արտագաղթելու պատրաստականությունը ըստ մարզերի

Մարզերի կտրվածքով միջինից բարձր էմիգրացիոն ներուժ դիտվել է Կոտայքի՝ 56,7%, Սյունիքի՝ 50,0%, Վայոց ձորի՝ 45,0%, և Շիրակի (42,5%) մարզերում և Երևանում՝ 35,6%: Հետաքրքրական է, որ եթե Շիրակում և Վայոց Ձորում արտագաղթելու մտադրություն ունեցողների մեծաթիվ լինելը պայմանավորված է օբյեկտիվ հանգամանքներով (աշխատատեղերի բացակայություն, անօթևաններ, սոցիալական ծանրագույն պայմաններ), ապա Երևանում, Կոտայքի և Սյունիքի մարզերում իրավիճակը համեմատաբար բարվոք է (արդյունաբերական, առևտրային, գյուղատնտեսական մթերքների վերամշակման ձեռնարկությունների առկայություն), ուստի արտագաղթելու մտադրության առաջացումը, ըստ երևույթին, պայմանավորված չէ միայն սոցիալ-տնտեսական գործոններով:

Արագածոտնի մարզի 38 հարցվողներից միայն 6-ն են հաստատել իրենց արտագաղթելու հաստատակամությունը (15,8%), Լոռու մարզում 40 հարցվողներից դարձյալ 6-ը (15,0%), իսկ Տավուշի մարզում 20 հարցվողներից միայն մեկն է հայտնել այդպիսի մտադրություն (հավելված 9): Բոլոր այն մարզերում, որտեղ արտագաղթելու մտադրություն չունեցողների տեսակարար կշիռը բարձր է, հարցվողները հիմնականում արտագաղթածների ընտանիքների տարեց անդամներն են:

Հետազոտության արդյունքներով նորից հաստատվեց այն փաստը, որ էմիգրացիոն ներուժը շարունակում է բարձր մնալ քաղաքային բնակչության շրջանում, ընդ որում՝ գյուղական բնակչության համանման ներուժի նկատմամբ այն բարձր է 6,6 տոկոսային կետով և կազմում է 33,6%, և ընդհակառակը, արտագաղթելու մտադրություն չունեն քաղաքային բնակչության 61.4%-ը՝ գյուղական բնակչության 65.3%-ի փոխարեն (գծապատկեր 8):



Գծապատկեր 8

Հարցվողների արտագաղթելու պատրաստականությունը՝ ըստ բնակության վայրի

3.2 Փաստացի աշխատանքային միգրանտների վերաբերյալ վիճակագրական հարցման արդյունքների վերլուծությունը

Էմիգրանտների նկարագիրը: Հետազոտության ընթացքում տեղեկություններ են հավաքագրվել 1352 էմիգրացվածների մասին, որոնցից Ն1063-ը կամ ընդհանուրի 78.6%-ը քաղաքային բնակավայրերից մեկնածներ են, իսկ 289-ը կամ 21,4%-ը՝ գյուղական: Գյուղական բնակավայրերից տեղեկություններ չեն հավաքագրվել միայն Լոռու, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի մարզերից: Էմիգրանտների բաշխումը ըստ ՀՀ վարչատարածքային բաժանման ներկայացված է հավելված 10-ում:

Էմիգրանտների սեռային կազմը ներկայացված է գծապատկեր 9-ում. երևում է, որ հանրապետությունից վերջին տարիներին մեկնածների մեջ ճնշող մեծամասնությունը տղամարդիկ են՝ 64.0%: Տվյալ բաժնեմասն ավելի բարձր է աշխատանքային միգրանտների թվաքանակում՝ 69,4%, մշտական բնակության մեկնածների մեջ տղամարդկանց տեսակարար կշիռը հավասար է 54.0%-ի, իսկ ընտանիքի վերամիավորման նպատակով մեկնածների մեջ՝ նվազում է մինչև 42.1%-ը:



Գծապատկեր 9

Էմիգրանտների բաշխումը՝ ըստ սեռի

Նախորդ հետազոտությունների արդյունքների հետ համեմատելիս՝ նկատվում է տղամարդկանց բաժնեմասի նվազում, ինչը, սակայն, բացատրվում է ընտրանքի մեթոդաբանության տարբերությունով: Արդեն նշվել է, որ սույն հետազոտությունում տեղեկություններ են հավաքագրվել նաև ամբողջ ընտանիքով մեկնածների վերաբերյալ, որոնց կազմում տղամարդկանց և կանանց տեսակարար կշիռները գրեթե հավասար են, ինչն էլ, վերջին հաշվով, մեծացնում է էմիգրացվածների մեջ կանանց բաժինը: Հարկ է նշել, որ վերջին մարդահամարի արդյունքները վկայում են, որ միջմարդահամարային ժամանակահատվածում (2001–2011 թթ.) բնակչության թվաքանակի՝ միգ-

ցիոն շարժով պայմանավորված նվազման մեջ սեռային հարաբերակցությունը 55/45-ի է հօգուտ տղամարդկանց: Գտնում ենք, որ միգրացիայի ուսումնասիրությանը նվիրված հետագա հետազոտությունների դիտարկման օբյեկտը ձևակերպելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել ընտանիքով մեկնածների համախմբին: Ավելորդ չէ նշել նաև, որ 2002–2007 թթ. ընթացքում մեկնածների մեջ տղամարդկանց բաժինը 78.5% էր[9]:

Էմիգրացիոն գործընթացներում տղամարդկանց առավել ներգրավվածությունը հանգեցնում է առկա բնակչություն մեջ վերջիններիս տեսակարար կշռի շարունակական նվազմանը: Այսպես, եթե 2011 թ. մարդահամարի արդյունքներով տղամարդկանց տեսակարար կշիռը առկա բնակչության մեջ 46.9% է, ապա 15 տարեկան և բարձր տարիքի բնակչության մեջ՝ արդեն 45.3%, ինչը վկայում է բնակչության սեռային հարաբերակցության շատ բարձր անհամամասնության մասին: Սեռային հարաբերակցության անհամամասնությունը, ինչպես նաև կանանց համեմատությամբ տղամարդկանց կյանքի սպասվելիք միջին տևողության 6–7 տարով ցածր լինելը, մեր հաշվարկներով, մոտավորապես 2018–2019 թթ. կհանգեցնի նրան, որ կանանց թիվը մահացածների ընդհանուր թվաքանակում կսկսի գերազանցել տղամարդկանց թվին: Նմանատիպ երևույթ Հայաստանում դիտվել է միայն 1988 թ., երբ երկրաշարժի զոհերի մեջ բարձր էր կացարաններում գտնվող անչափասների, մեծահասակների ու հատկապես կանանց տեսակարար կշիռը:

Աղյուսակ 5-ի տվյալներից երևում է, որ Էմիգրացվածների մեջ բարձր են 20–29 և 30–39 տարեկանների տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 27,2% և 27,7% են, կամ երկու խումբը միասին վերցրած՝ էմիգրանտների ընդհանուր թվաքանակի կեսից ավելին են: Սա փաստում է այն մասին, որ արտագաղթը հիմնականում տեղ է գտնում երիտասարդ տարիք ունեցողների շրջանում: Էմիգրացվածների մեջ բարձր են նաև 40–49 և 50–59 տարեկանների տեսակարար կշիռները՝ 20,2% և 16,9%:

Էմիգրացիոն գործընթացներում բնակչության առանձին տարիքային համակցությունների ոչ միատեսակ մասնակցության մասին պատկերացում կազմելու համար կիրառենք էմիգրացիոն ակտիվության հետևյալ պայմանական ցուցանիշները: Եթե ամբողջ բնակչության էմիգրացիոն ակտիվության միջին մակարդակը պայմանականորեն համարենք հավասար մեկ միավորի կամ 100%-ի, ապա առանձին տարիքային խմբերի համար այն հավասար կլինի հանրապետությունից մեկնածների կառուցվածքում տվյալ տարիքային խմբի տեսակարար կշռի հարաբերությանը՝ առկա բնակչության կառուցվածքում տվյալ տարիքային խմբի կշռի նկատմամբ:

[9] ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, Երևան 2008, էջ 54:

Աղյուսակ 5

ՀՀ առկա և էմիգրացված չափահաս բնակչության սեռա-տարիքային կառուցվածքը և էմիգրացիոն ակտիվության պայմանական գործակիցները, տոկոսով

Տարիք	Առկա բնակչություն			Մեկնած բնակչություն			Էմիգրացիոն ակտիվություն,%		
	Տղա-մարդիկ	Կա-նայք	Ընդա-մենը	Տղա-մարդիկ	Կա-նայք	Ընդա-մենը	Տղա-մարդիկ	Կա-նայք	Ընդա-մենը
18–19 տարեկան	4,4	3,8	**4,1**	1,8	5,1	**3,0**	40,9	134,2	**73,2**
20–29 տարեկան	27,5	22,7	**24,8**	26,9	27,7	**27,2**	97,8	122,0	**109,7**
30–39 տարեկան	19,8	16,7	**18,1**	28,7	26,1	**27,7**	144,9	156,3	**153,0**
40–49 տարեկան	14,2	15,5	**15,0**	21,0	18,7	**20,2**	147,9	120,6	**134,7**
50–59 տարեկան	16,5	19,2	**18,0**	17,5	16,0	**16,9**	106,1	83,3	**93,9**
60 տարե-կան և բարձր	17,6	22,0	**20,0**	4,0	6,4	**4,9**	22,7	29,1	**24,5**
Ընդամենը	*100,0*	*100,0*	***100,0***	*100,0*	*100,0*	***100,0***	*100,0*	*100,0*	***100,0***

Աղյուսակ 5-ում դրանք ներկայացված են «էմիգրացիոն ակտիվություն» անվամբ սյունակի ներքո, ընդ որում՝ ըստ սեռերի և երկու սեռերը՝ միասին: Տվյալ ցուցանիշի տարիքային արժեքները վկայում են, որ էմիգրացիոն ակտիվությունը երկու սեռերի կտրվածքով միջինից ցածր է երեք տարիքային խմբերում՝ 18–19, 50–59 և 60-ից բարձր տարեկանների շրջանում: Հատկապես այն ցածր է 60 տարեկանից բարձր տարիքային խմբում՝ 24,5%, ինչը նշանակում է, որ տվյալ տարիքային խմբի էմիգրացիոն ակտիվությունը բոլոր տարիքային խմբերի միջին ակտիվությունից ցածր է 75,5%-ով: Իսկ առավել բարձր ակտիվությամբ աչքի են ընկնում 30–39 տարեկանների՝ 153,0%, և 40–49 տարեկանների՝ 134,7%, համակցությունները: Սակայն էմիգրացիոն ակտիվության սեռա-տարիքային կառուցվածքում նկատվում են որոշակի շեղումներ՝ կանանց ակտիվությունը տղամարդկանց համեմատությամբ բարձր է մինչև 40 տարեկան տարիքային խմբերում, համապատասխանաբար ցածր է՝ 40 տարեկանից բարձր խմբերում:

Էմիգրանտների ընդհանուր թվաքանակում բավական բարձր է ամուսնացածների տեսակարար կշիռը՝ 70,5%: Հաշվի առնելով, որ ըստ 2011 թ. մարդահամարի արդյունքների, ամուսնացած է 15 և բարձր տարիքի ՀՀ

մշտական բնակչության 60,1%-ը, նշանակում է ամուսնացածների էմիգրացիոն ակտիվությունը միջին ակտիվությունից բարձր է 17,3%-ով: Հատկանշական է նաև, որ ամուսնացած չեն արտագաղթած տղամարդկանց 27,6%-ը՝ կանանց 14,2%-ի դիմաց: Չամուսնացած տղամարդկանց մեջ բարձր է 20–29 տարիքային խմբի բաժինը՝ 67,4%, նույն տարիքի կշիռը չամուսնացած կանանց կազմում արդեն 46,3% է:

Աղյուսակ 6

ՀՀ 15 և բարձր տարիքի 2011 թ. մշտական և 2002–2013 թթ. էմիգրացված բնակչության կրթական մակարդակը, տոկոսով

Տարիք	*2011 թ. մշտական բնակչություն*[10]	*Մեկնած բնակչություն*			
		2002–2007 թթ.[11]	*2008–2013 թթ.*		
			Տղամարդիկ	*Կանայք*	*Ընդամենը*
Բարձրագույն և հետբուհական	21,7	17,9	39,2	44,5	41,2
Թերի բարձրագույն	2,3	2,2	4,6	4,5	4,6
Միջին մասնագիտական	20,4	17,2	17,6	18,7	18,0
Ընդհանուր միջնակարգ	45,1	59,6	35,6	31,2	34,0
Ընդհանուր հիմնական	10,5	3,1	3,0	1,1	2,2
Ընդամենը	**100,0**	**100,0**	**100,0**	**100,0**	**100,0**

Էմիգրանտների 41,1%-ը ունի բարձրագույն և հետբուհական կրթություն, ինչը կրկնակի բարձր է 2011 թ. մարդահամարի արդյունքներով 15 և բարձր տարիքի մշտական բնակչության, ինչպես նաև 2002–2007 թթ. էմիգրացվածների մեջ տվյալ կրթական մակարդակն ունեցողների բաժնի համեմատ: Ընդ որում, արտագաղթած կանանց համախմբում բարձրագույն կրթություն ստացածների բաժնեմասը 5,3 տոկոսային կետով բարձր է տղամարդկանց միևնույն ցուցանիշի արժեքից:

Միջին մասնագիտական կրթություն ունեցողների բաժնով գրեթե միմյանց հավասար են աղյուսակ 6-ում բերված համակցությունները:

Նշանակալի հաջորդ միտումը վերաբերում է ընդհանուր միջնակարգ կրթությամբ էմիգրացվածների բաժնի նվազմանը: Այսպես, եթե մարդա-

[10] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար-դեկտեմբերին, Երևան 2013, էջ 129:
[11] ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, Երևան 2008, էջ 54-55:

համարի արդյունքներով կրթական տվյալ մակարդակն ունեն բնակչության 45.6%-ը, ապա էմիգրացվածների համախմբում դա 11.6 տոկոսային կետով փոքր է՝ 34.0%:

Քաղաքային և գյուղական բնակավայրերից էմիգրացվածների կրթական մակարդակների միջև անհամամասնությունները նույնպես զգալի են (գծապատկեր 10): Եթե քաղաքային բնավայրերից էմիգրացվածների կազմում բարձրագույն և հետբուհական կրթություն ունեն 45,7%-ը, ապա գյուղականի դեպքում այն գրեթե կրկնակի ցածր է՝ 24.7%: Հետևաբար, գյուղական բնակավայրերից էմիգրացվածների կազմում, քաղաքայինի համեմատությամբ, բարձր է ինչպես միջին մասնագիտական, այնպես էլ ընդհանուր միջնակարգ կրթությամբ անձանց բաժինը:



Գծապատկեր 10

Էմիգրանտների կրթական մակարդակը՝ ըստ բնակության վայրի (%)

Կրթական մակարդակի տարբերակվածություն է նկատվել նաև ըստ մարզերի էմիգրացվածների բաշխման առումով: Գծապատկեր 11-ից երևում է, որ կրթական մակարդակը (բարձրագույն կրթություն ունեցողների բաժինը) համեմատաբար բարձր է Երևանից (54,5%), Արագածոտնի (64,9%) և Լոռու (42,6%) մարզերից էմիգրացվածների շրջանում:

Ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցող էմիգրանտների տեսակարար կշիռը բարձր է Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում: Էմիգրանտների կրթական մակարդակի կառուցվածքը տարբեր է նաև ըստ Էմիգրացման երկրի: Այսպես, եթե Ռու-

սաստան մեկնածների մեջ բարձրագույն կրթություն ունեն 32,3%-ը, ապա Եվրոպա, ԱՄՆ, Կանադա և այլ երկրներ մեկնածների համախմբում այն 50%-ից բարձր է: Բարձրագույն կրթությամբ էմիգրացվածների կշիռը համեմատաբար ցածր է 2013 թ. մեկնածների կազմում՝ 34.6%:



Գծապատկեր 11

էմիգրանտների բաշխվածությունը՝ ըստ մարզերի և կրթության (%)

Սույն վիճակագրական հետազոտությունը ընդգրկում է էմիգրացիայի չորս ժամանակաշրջան՝ 2008–2009 թթ., 2010–2011 թթ., 2012 թ. և 2013 թ.: Հետազոտության առումով հետաքրքրություն են ներկայացրել նաև մինչև 2008 թ. արտագաղթած այն էմիգրանտների մասին տվյալները, ովքեր մեկնել են ուսումնասիրվող ժամանակաշրջանին նախորդող 2–3 տարիների ընթացքում և հաջորդ տարիներին դարձել են ընտանիքների վերամիավորման կրողներ կամ էլ միայնակ էմիգրանտներ են, որոնց ընտանիքները չեն ցանկանում արտագաղթել: Այդպիսիք մեր հետազոտությունում 130-ն են, որոնք էմիգրանտների ընդհանուր թվի ընդամենը 9,6%-ն են: Ըստ հարցման արդյունքների՝ ուսումնասիրվող առանձին ժամանաշրջանների և տարիների կտրվածքով էմիգրացիան ունեցել է հետևյալ պատկերը. 2008–2009 թթ.՝ 392 մարդ, որը կազմում է էմիգրանտների ընդհանուր թվի 28,9%, 2010–2011 թթ.՝ 298 մարդ կամ էմիգրանտների ընդհանուր թվի 22%-ը, 2012 թ.՝ 246 մարդ կամ 18,2%-ը և 2013 թ.՝ 286 մարդ կամ էմիգրանտների ընդհանուր թվի 21,2%-ը: Էմիգրանտների բաշխումն ըստ մեկնման երկրի և մեկնման ժամանակաշրջանի բերված է աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Էմիգրացիայի ժամանակը և մեկնման երկիրը, տոկոս

Մեկնման երկիր	*Երբ է մեկնել*					
	Մինչև 2008 թ.	*2008–2009 թթ.*	*2010–2011 թթ.*	*2012 թ.*	*2013 թ.*	*Ընդամենը*
Ռուսաստան	46,9	59,9	72,5	74,0	81,5	**68,6**
ԱՊՀ այլ երկրներ	3,1	6,4	1,3	2,8	0,7	**3,1**
Եվրոպա	23,8	16,8	12,4	11,0	7,3	**13,5**
ԱՄՆ և Կանադա	22,4	14,3	12,4	9,3	10,1	**12,8**
Այլ երկրներ	3,8	2,6	1,3	2,8	0,3	**2,0**
Ընդամենը	**9,6**	**29,0**	**22,0**	**18,2**	**21,2**	**100.0**

Ինչպես տեսնում ենք՝ հետազոտության շրջանակներում ավելի շատ ընդգրկվել են 2008–2009 թթ. Էմիգրացվածները, որոնք ընդհանուրի մեջ 29,0% են, սակայն եթե նկատի ունենանք, որ տվյալ ժամանակահատվածը բաղկացած է երկու տարիներից, իսկ նախորդ երկու ժամանակահատվածները բերված են տարեկան կտրվածքով, ապա կստացվի, որ արտագաղթի բարձր տեմպերը գրանցվել են հենց 2012 և 2013 թթ.: Միգրանտների գերակշռող մասը՝ 68,6%-ը հանգրվանել է Ռուսաստանի Դաշնությունում և ուսումնասիրվող բոլոր ժամանակահատվածներում միգրացիոն հոսքերը ուղղված են եղել առավելապես դեպի այդ երկիրը: Եվրոպական երկրներին բաժին է ընկնում էմիգրանտների 13,5%-ը, ԱՄՆ-ին և Կանադային՝ 12,8%-ը, իսկ մնացած երկրների բաժինը 5,1% է: Այս բաշխումը հաստատում է Ռավենստայնի այն «օրենքը», ըստ որի միգրացիայի գործընթացն ունի աստիճանական բնույթ, սկզբում այն ենթադրում է մարդկանց տեղաշարժ դեպի աշխարհագրորեն մոտ, իսկ այնուհետև դեպի արագ զարգացող քաղաքներ (երկրներ):

Աղյուսակ 7-ի տվյալներից նկատելի է նաև, որ Ռուսաստան մեկնածների բաժնինը տարեց տարի աճում է, ինչը բացատրվում է նրանով, որ յուրաքանչյուր տարի մեկնածների մոտ մեկ երրորդը (կամ ավելի մեծ մասը) վերադառնում է հայրենիք, իսկ վերջիններիս մեջ առյուծի բաժինը հենց Ռուսաստան մեկնածներն են: Դա նշանակում է, որ մեկ-երկու տարի անց նշված տարիներին էմիգրացվածների և Հայաստանի սահմաններից դուրս գտնվողների կառուցվածքում Ռուսաստանի բաժինը, վերադարձողների շնորհիվ, նորից նվազելու է: Նույնը վերաբերում է նաև էմիգրացվածների կազմում տղամարդկանց և միայնակ էմիգրացվածների բաժնի աճին, որոնք 2013 թ. համապատասխանաբար եղել են 71,0% և 37,8%:

Միայնակ էմիգրացվածների բաժինը բարձր է գյուղական բնակավայրերից մեկնածների շրջանում՝ 38,0%, իսկ ընտանիքով մեկնածների բաժինը մեծ է քաղաքային բնակավայրերից մեկնածների շրջանում՝ 60,5%-ը:

Տարածաշրջանային կտրվածքով միայնակ մեկնածների կշիռը բարձր է Արմավիրի և Սյունիքի մարզերում՝ համապատասխանաբար 50,5% և 64,1%, իսկ ընտանիքի հետ մեկնածների առումով բարձր են Արագածոտնի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի ցուցանիշները (հավելված 11):

Մեր հետազոտությունը հաստատում է նաև մեկ այլ՝ միջազգային տնտեսագիտության մեջ ամրագրված օրինաչափություն. ավելի հեռավոր զարգացած տարածաշրջաններ կամ երկրներ միգրանտները տեղափոխվում են ընտանիքներով և կայացնում մշտական բնակության որոշում: Օրինակ՝ Եվրոպական երկրներ էմիգրացվածների 73,1%-ը ու ԱՄՆ և Կանադա էմիգրացվածների 77%-ը արտագաղթել են ընտանիքներով:

Միգրացիայի ամենաակտիվ ուղղությունը, ըստ հետազոտության արդյունքների, Ռուսաստանի Դաշնությունն է, որտեղ գտնվում է վերջին տարիներին էմիգրացվածների 68,6%-ը (աղյուսակ 8): Էմիգրացիայի «ռուսաստանյան» տարբերակի հարաբերական մատչելիությունը կանխորոշված է, նախ և առաջ, տնտեսական գործոնով (վիզայի և դրա ստացման վճարի բացակայություն, աշխարհագրական դիրք, ավտոմոբիլային տրանսպորտի մատչելիություն), սոցիալ-հոգեբանական միջավայրի սկզբունքային նույնությամբ, վերջապես՝ լեզվական արգելքի բացակայությամբ:

Աղյուսակ 8

Էմիգրանտների բաշխումը՝ ըստ մեկնման երկրի, տոկոս[12]

Մեկնման երկիր	*2008 թ.*	*2009 թ.*	*2013 թ.*
Ռուսաստան	79,7	73,1	68,6
ԱՊՀ այլ երկրներ	3,6	6,8	3,1
Եվրոպական երկրներ	10,2	8,2	13,4
ԱՄՆ և Կանադա	5,0	7,9	12,9
Այլ երկրներ	1,5	4,0	2,0
Ընդամենը	**100,0**	**100,0**	**100,0**

Սակայն 2002–2007 թթ. համեմատությամբ Ռուսաստան մեկնածների բաժինը մի փոքր նվազել է, ինչը պայմանավորված է սույն հետազոտությունում քաղաքային բնակավայրերից, ինչպես նաև բարձր կրթական մակարդակ ունեցող միգրանտների ներգրավվածության բարձր աստիճանով: Օրինակ՝ Երևան քաղաքից մեկնածների միայն 50,8%-ն է ուղևորվել Ռուսաստան: Հաջորդ ուշագրավ հանգամանքն այն է, որ զգալիորեն աճել են Եվրո-

[12] ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, Երևան 2008, էջ 64, Միգրանտների կողմից Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումներ, Երևան 2009, էջ 17:

պական երկրներ և ԱՄՆ մեկնողների բաժինները, որոնք համապատասխանաբար կազմել են 13,4% և 12,9%: Եվրոպական երկրներ մեկնողների տարիքային կազմում բարձր է 20–29 տարեկանների բաժինը՝ 16,6%, իսկ ԱՄՆ և Կանադա մեկնողների կազմում՝ մինչև 20 և 60-ից բարձր տարեկաններինը՝ համապատասխանաբար 22,0% և 22,7%: Ըստ ընտանեկան դրության՝ դեպի նշված երկրներ մեկնումը բարձր է այրիների և ամուսնալուծվածների համակցություններում, ինչպես նաև կանանց կոհորտայում՝ 18%-ից բարձր: Էմիգրացիան դեպի Ամերիկա մայրցամաք բարձր է Երևանից մեկնածների՝ 27,4%, իսկ դեպի եվրոպական երկրներ՝ Արագածոտնի (23,4%), Արարատի (17,9%), Արմավիրի (22,0%) և Լոռու (17,8%) մարզերից մեկնածների շրջանում:

Աղյուսակ 9-ի տվյալները վկայում են, որ դիտարկվող ժամանակաշրջանում (2002–2013 թթ.) էմիգրանտների զբաղվածության կարգավիճակում տեղի են ունեցել կառուցվածքային էական տեղաշարժեր: Այսպես, նշված ժամանակաշրջանի երկրորդ վեցամյակում (2008–2013 թթ.), առաջին (2002-2007 թթ.) վեցամյակի համեմատությամբ 25,3 տոկոսային կետով նվազել է վարձու աշխատողների տեսակարար կշիռը՝ դառնալով 41,4%: Որոշ չափով սա բացատրելի է. երկրորդ ժամանակաշրջանն ընդգրկող հետազոտության ընտրանքում կանանց տեսակարար կշիռն ավելի բարձր է, իսկ կանանց կոհորտայում վարձու աշխատողների տեսակարար կշիռը (25,1%) կրկնակի ցածր է տղամարդկանց նույնանուն ցուցանիշի արժեքից (50,5%): Նշենք նաև, որ վարձու աշխատողների բաժնեմասը ցածր է առևտրի ոլորտում աշխատողների (25,1%) և բնակվելու իրավունքով էմիգրացվածների (34,9%) համախմբերում: Տարածաշրջանային կտրվածքով այն 30%-ից ցածր է Արագածոտնի, Արարատի և Տավուշի մարզերում, որտեղ, սակայն, 13%-ից բարձր է գործատուների բաժինը:

Դիտարկվող ժամանակահատվածում էմիգրացվածների ընդհանուր թվաքանակում շեշտակիորեն՝ ավելի քան 3 անգամ, աճել է ինքնազբաղվածների բաժինը: Վերոնշյալը, թերևս բացատրվում է այն իրողությամբել նրանով, որ, ի տարբերություն հայրենիքի, արտերկրում էմիգրանտները (անկախ աշխատուժի որակից) կարողանում են իրենց ձեռնարկատիրական ունակություններն ավելի ազատորեն և ամբողջապես իրացնել: Ասվածը, անվերապահորեն, վերաբերում է նաև գործատուների բաժինը, որը 2013 թ. դրությամբ մեկնածների ընդհանուր թվաքանակի մեջ արդեն 7,7% է: Նշենք նաև, որ գյուղական բնակավայրերից մեկնածների համախմբում քաղաքայինի համեմատությամբ ինքնազբաղվածներն ու գործատուներն ունեն ավելի մեծ բաժին:

Աղյուսակ 9.

Զափահաս էմիգրանտների բաշխումը՝ ըստ զբաղվածության կարգավիճակի 2002–2013 թթ., տոկոս[13]

Կարգավիճակ	*2002–2007 թթ.*	*2008–2013 թթ.*
Վարձու աշխատող	66,7	41,4
Ինքնազբաղված	9,2	32,0
Գործատու	2,8	7,7
Գործազուրկ (աշխատանք չեն գտել)	2,4	4,7
Տնային տնտեսուհի (չեն ցանկացել կամ ի վիճակի չեն աշխատելու)	11,2	9,6
Կենսաթոշակառու կամ խնամքի տակ գտնվող	7,7	4,6
Ընդամենը	**100,0**	**100,0**

Ինչպես երևում է աղյուսակ 10-ից՝ արտերկրում միգրանտների ամենամեծ խումբը զբաղված է սպասարկման (ծառայությունների մատուցման) ոլորտում՝ 31,6%, սրան հետևում են առևտրի (26,3%) և շինարարության (25,0%) ոլորտները: Անզեն աչքով էլ նկատելի են դիտարկվող ժամանակահատվածում գործունեության ոլորտներում արձանագրված կառուցվածքային տեղաշարժերը: Առաջին՝ ավելին քան երկու անգամ նվազել է շինարարության ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը, ինչը բացատրվում է 2008 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամով. ընդ որում՝ դրա ազդեցությունն ունի աստիճանական մարման միտում:

Այսպես, եթե վերջինիս բաժինը 2008–2009 թթ. կազմել է 15,9%, ապա 2013 թ. այն արդեն հասել է 43,8%-ի: Բացի դրանից, եթե տղամարդկանց գործունեության ամենապահաջարկված ոլորտը շինարարությունն է՝ 32,3%, ապա կանայք առաջնությունը տալիս են սպասարկմանը՝ 51,8%:

Գործունեության ոլորտների նմանատիպ հարաբերակցություն է դիտվում նաև էմիգրանտների ըստ բնակության վայրի բաշխվածությունում. եթե գյուղական բնակավայրերից մեկնածները նախապատվությունը տալիս են շինարարությանը, որտեղ զբաղվածությունը կազմում է 31,7%, ապա քաղաքային բնակավայրերից մեկնածների 33,6%-ը մոտ այն սպասարկման ոլորտն է՝ ով: Շինարարության ոլորտը գերակշռում է նաև միջնակարգ կրթություն ունեցող (35–45%), Ռուսաստան ուղևորվող (33,4%), ինչպես նաև Գեղարքունիքի (41,5%) և Սյունիքի (41,0%) մարզերից մեկնողների շրջանում:

[13] ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, Երևան 2008, էջ 58:

Աղյուսակ 10

Զբաղված էմիգրանտների բաշխումը՝ ըստ գործունեության ոլորտի, տոկոս[14]

Գործունեության ոլորտ	*2002–2007 թթ.*	*2008–2013 թթ.*
Արդյունաբերություն	4,2	6,0
Շինարարություն	62,8	25,0
Տրանսպորտ	4,2	5,5
Առևտուր	10,5	26,3
Սպասարկում և ծառայություններ	11,0	31,6
Այլ	7,3	5,6
Ընդամենը	**100,0**	**100,0**

2013 թ. մեկնածների՝ ըստ գործունեության ոլորտի կառուցվածքում, նախորդ տարիների համեմատությամբ, բարձր է շինարարության բաժնեմասը՝ 42,1%, երբ վերջինս 2012 թ. 28,1% էր: Շինարարության ոլորտում զբաղվածների մի մասը, շինարարության սեզոնի ավարտին, վերադառնում է Հայաստան: Համենայն դեպս, ըստ մեր հարցումների, նշված ոլորտում զբաղվածների 37,7%-ը պատրաստվում է վերադառնալ:

Հավելված 12-ի տվյալներից երևում է, որ էմիգրացվածների գործունեության ամենահաճախադեպ ոլորտը սպասարկումն ու ծառայություններն են՝ ընդամենի 31,0%-ը, այնուհետև առևտուրն է՝ 25,6%, իսկ շինարարությունը միայն երրորդն է՝ 24,2%: Սպասարկման ոլորտում առավել ակտիվ են իրենց դրսևորում բարձրագույն կրթություն ունեցող (38,0%), մինչև 2012թ. (35–37%), Եվրոպա (61,7%) և ԱՄՆ (63,8%) ուղևորված, ինչպես նաև Երևանից (45,2%) մեկնած միգրանտների համակցությունները:

Արտագաղթելու նպատակը[15]: Էմիգրանտների մեկնման նպատակների մեջ շեշտակիորեն առանձնանում է աշխատանքի որոնումը՝ 76,8%, ինչը նշանակում է, որ հետազոտված էմիգրանտների ամբողջ համակցությունում հենց այդքանն էլ աշխատանքային միգրանտներ են: Մշտական բնակության հաստատումը նշվել է մեկնածների 48,6%-ի համար: Փոքր մաս չեն կազմում նշված երկու նպատակն էլ կարևորող միգրանտները՝ 30,2%: Ընտանիքին վերամիավորվելու հանգամանքը բնորոշ է էմիգրացվածների 7,9%-ին, իսկ այլ նպատակներ հետապնդել են մեկնածների ընդամենը 3,9%-ը: Ավելացնենք, որ նշված բաժնեմասերը հաշվարկված են մեկնածների նկատմամբ,

[14] ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, Երևան 2008, էջ 59:

[15] Արտագաղթի նպատակը ուսումնասիրելիս հարցվողները հնարավորություն են ունեցել որպես էմիգրացվածի մեկնման նպատակ նշել մինչև երեք պատասխան:

այլ ոչ թե ըստ պատասխանների գումարային թվաքանակի: Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր մեկնածի հաշվով միջինում նշվել է 1,9 նպատակ:

Այժմ մեկնման առանձին նպատակները լուսաբանենք ըստ առանձին սոցիալ-ժողովրդագրական համակցությունների: Այսպես, աշխատանքի որոնումն ավելի արդիական է տղամարդ միգրանտների համար՝ 83,3%՝ կին-միգրանտների 65,2%-ի դիմաց: Իսկ մշտական բնակության նպատակով մեկնումն արդեն ավելի գրավիչ է կանանց համար՝ 62,0%:

Աշխատանքի նպատակով մեկնածների մեջ 20–49 տարեկանները կազմում են մեկնածների ընդհանուր թվի 74,6%-ը, իսկ նույն նպատակով մեկնածների բաժինը բարձր է արդեն 40–49 և 50–59 տարեկանների տարիքային խմբերում՝ համապատասխանաբար 82,4% և 81,2%: Մշտական բնակության նպատակով մեկնածների կազմում բարձր է երկու «բևեռային» տարիքային խմբերի բաժինը (հավելված 13):

Ըստ մարզերի արտագաղթելու նպատակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխատելու նպատակով մեկնածների առումով ցածր է Երևանի ցուցանիշը՝ 60,6%, այնինչ մնացած մարզերի համար տվյալ ցուցանիշը 86,2% է: Մշտական բնակություն հաստատելու նպատակով մեկնածների կազմում միջինից բարձր են Գեղարքունիքի (78,2%) և Կոտայքի (67,0%) արդյունքները: Ընտանիքների վերամիավորման նպատակով մեկնածների տարածաշրջանային կազմում մյուս մարզերի համեմատությամբ բարձր է Երևանի ցուցանիշը՝ 13,8% (հավելված 14): Գյուղական բնակավայրերից էմիգրացվածների շրջանում ավելի տարածված է աշխատանքային միգրացիան՝ 85.3%, իսկ քաղաքային բնակավայրերից մեկնածների համախմբում գյուղականի համեմատությամբ բարձր է մնացած նպատակներով էմիգրացվածների բաժինը (հավելված 15):

Ավելի հետաքրքրական է միգրացիայի նպատակի ուսումնասիրությունը՝ ըստ մեկնման վայրի (գծապատկեր 12): Այսպես, աշխատանքային միգրանտների 79,3%-ը մեկնել է Ռուսաստան: Այս տեսանկյունից հատկանշական է նաև, որ դեպի Ռուսաստան էմիգրացվածների կազմում աշխատանքային միգրացիան ունի շատ բարձր բաժին՝ 88,8%, մինչդեռ Եվրոպա և ԱՄՆ մեկնածների մեջ այն չի գերազանցում 50%-ը: Եվրոպական երկրներ և Ամերիկա էմիգրացվածների համախմբում աշխատանքի որոնման նպատակին զգալիորեն գերազանցում է մշտական բնակության նպատակով մեկնածների բաժինը (գծապատկեր 13): Վերջինս նշված երկրներում համապատասխանաբար 67.6% և 81.0% է (հավելված 16):

Դեպի Ռուսաստան աշխատանքային միգրացիայի մեծ տեսակարար կշիռը կարելի է բացատրել այդ երկրում օրինական և անօրինական զբաղվածության լայն հնարավորություններով, գործարարությամբ զբաղվելու և աշխատելու իրավունք ստանալու դյուրինությամբ, ծառայությունների ոլորտում աշխատանք գտնելու հնարավորություններով:



Գծապատկեր 12

Աշխատանքային նպատակով միգրանտների բաշխվածությունը՝ ըստ մեկնման երկրի (%)



Գծապատկեր 13

Մշտական բնակության մեկնած միգրանտների բաշխվածությունը՝ ըստ մեկնման երկրի (%)

Մեկնման ժամանակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխատանքային էմիգրանտների ընդհանուր թվաքանակում միայն 2008–2009 թթ. մեկնածների բաժինը եղել է է 28,9%, ինչը կարելի է նախ բացատրել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում ՀՀ-ում գրանցված աննախադեպ տնտեսական անկմամբ, և երկրորդ՝ ձևավորված ներքին քաղաքական իրավիճակով: 2010–2011 թթ. կտրվածքով վերոնշյալ ցուցանիշը որոշ չափով նվազում է՝ 22.7%, իսկ 2012–2013 թթ. նորից աճում՝ դառնալով ընդհանուրի 41.0%-ը: Հարկավոր է նաև նկատի ունենալ, որ 2013 թ. տվյալները ներառում են մինչև սեպտեմբերը (գծապատկեր 14):

Հավելված 17-ի տվյալներից նկատելի է հետևյալ օրինաչափությունը՝ աշխատանքային միգրացիայի բաժինը ժամանակի ընթացքում հետզհետե աճում է, իսկ մշտական միգրացիան՝ նվազում: Դա բացատրվում է նրանով, որ աշխատանքային (բնույթով՝ ժամանակավոր) միգրանտների կեսից ավելին առաջին անգամ մեկնելուց 5–6 տարի անց արտերկրում իրենց կարգավիճակը վերափոխում են մշտականի:

Հատկանշական է, որ աշխատանք որոնելու նպատակով ՀՀ-ից մեկնած միգրանտների բավական մեծ մասը՝ 35,2%-ը, ունի բարձրագույն և հետբուհական կրթություն: Այնուամենայնիվ, այդ նպատակով արտագաղթածների մեջ ավելի մեծ է ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների տեսակարար կշիռը (37,5%), որից կարելի է ենթադրել, որ աշխատանքային միգրանտների մեծ մասն արտասահմանում ներգրավված է ծառայությունների ոլորտում և սեզոնային ոչ բարձր որակավորում պահանջող աշխատանքներում:



Գծապատկեր 14

Արտագաղթի նպատակը ըստ մեկնման ժամկետի

Մշտական բնակության նպատակով մեկնածների 42,5%-ը, իսկ ընտանիքների վերամիավորման նպատակով մեկնածների 63,6%-ը ունեն բարձրագույն և հետբուհական կրթություն: Ընդհակառակը, ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների տեսակարար կշիռն ավելի ցածր է մշտական բնակության (34,7%) և ընտանիքների վերամիավորման նպտակով (20,6%) արտագաղթածների շրջանում:

Միգրացիայի դրդապատճառները: Հետազոտության արդյունքները վերահաստատեցին այն փաստը, որ Հայաստանից էմիգրացման հիմնական պատճառներն առնչվում են զբաղվածության հիմնախնդիրներին, ինչպես առհասարակ աշխատանքի, այնպես էլ ըստ մասնագիտության աշխատանքի բացակայությանը, և ամենակարևորը՝ արժանավայել ապրուստ ապահովող վարձատրությամբ աշխատատեղերի պակասին:

Հարկ է նշել, որ հետազոտության ընթացքում արտերկրում միգրանտ ունեցող տնային տնտեսության հարցված անդամներին հնարավորություն էր ընձեռվել նշելու էմիգրացման մինչև 3 դրդապատճառ: Աղյուսակ 11-ի տվյալներից նկատում ենք, որ պատճառների մեջ ամենամեծը աշխատատեղերի բացակայության պատճառների գումարային բաժինն է, որը, սակայն, նախորդ տարիների համեմատ նվազել է: Այսպես, եթե 1998 թ. աշխատատեղերի և մասնագիտական աշխատանքի բացակայության պատճառները կարևորել էին հարցվածների 49,7%-ը, իսկ 2008 թ.՝ 46,6%-ը, ապա 2013 թ. դրանց գումարային տեսակարար կշիռը նվազել է մինչև 33,7%-ը: Քննարկ-

վող ցուցանիշն արտացոլում է տվյալ պատճառի (պատճառների) բաժինը բոլոր պատճառների հանրագումարի մեջ, և, քանի որ տվյալ հարցի վերաբերյալ մեկ ռեսպոնդենտի նշած պատասխանների միջին թիվը 2008 թ. 1,5-ից 2013 թ. դարձել է 2,2 (աճել է մոտ 42%-ով), ապա ժամանակային համադրելիությունն ապահովելու նպատակով էմիգրացիայի դրդապատճառների դինամիկան ավելի նպատակահարմար է ուսումնասիրել ըստ էմիգրանտների նկատմամբ դրանց բաժինների: Ըստ այդմ, աշխատատեղերի և մասնագիտական աշխատանքի բացակայության պատճառները 2013 թ. նշել է հարցվածների 73,4%-ը՝ 2008 թ. 71,6%-ի դիմաց, ինչը նշանակում է, որ գրանցվել է չնչին աճ:

Աղյուսակ 11

Էմիգրանտների բաշխումը ըստ մեկնելու դրդապատճառների 1998–2013 թթ. համար, տոկոս

Դրդապատճառներ	*1998 թ.*	*2008 թ.*		*2013 թ.*	
		Պատաս-խանների նկատմամբ	*Էմիգրանտ-ների նկատմամբ*	*Պատաս-խանների նկատմամբ*	*Էմիգրանտ-ների նկատմամբ*
1. Աշխատատեղերի բացակայությունը	41,9	43,2	66,3	26,1	56,9
2. Մասնագիտական աշխատանքի բացակայությունը	7,8	3,4	5,3	7,6	16,5
3. Հայաստանի զարգացման հեռանկարի բացակայությունը	7,4	7,8	12,0	23,3	50,7
4. Ձեռներեցությամբ զբաղվելու դժվարությունները	4,3	1,3	1,9	8,4	18,3
5. Բավարար կենս. ապահովելու համար անհրաժեշտ միջոցները վաստակելու անհնարինություն	23,2	35,0	53,7	18,0	39,3
6. Սոցիալական, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը	8,7	2,6	4,1	4,8	10,5
7. Անարդարությունը	6,7	6,7	10,3	11,8	25,8
Ընդամենը	*100,0*	*100,0*	*153,6*	*100,0*	*218,0*

Էմիգրացիայի պատճառների ժամանակային փոփոխությունների դիտարկումը բացահայտում է նաև նպատակադրումների որոշակի տեղաշարժ: Առաջին, եթե բավարար կենսամակարդակ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը 2008 թ. պատասխանների մեջ 35,0% էր (իսկ էմիգրանտների թվաքանակի նկատմամբ 53,7%), ապա 2013 թ. այն գրեթե կրկնակի նվազել է՝ դառնալով 18,0% կամ էմիգրանտների թվաքանակի 39,3%-ը:

Երկրորդ ուշագրավ փաստը, որի մասին ասերկբա վկայում են աղյուսակի տվյալները, հասարակական վստահության, Հայաստանի զարգացման հեռանկարի, կամ, որ նույնն է, ապագայի հանդեպ հավատի հողմահարման՝ առավել քան տագնապահարույց երևույթն է: Երևի թե միայն այս կերպ է հնարավոր մեկնաբանել Հայաստանի զարգացման հեռանկարի բացակայության՝ արտագաղթածին այդ գործոնի եռապատկումը 2008–2013 թթ. ընթացքում, իսկ էմիգրանտների թվաքանակի՝ քառապատկումը: Այսպես, եթե ապագայի հանդեպ անվստահությունը, որպես արտագաղթի դրդապատճառ 2008 թ. նշել են հարցվածների 12,0%-ը, ապա 2013 թ.՝ արդեն ամեն երկրորդը (կամ՝ 50,7%): Կրկնակի է աճել նաև սոցիալական, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտի ազդեցությունը, որը 2013 թ. նշվել են ամեն տասներորդ էմիգրանտի հաշվով: Ասվածից ստացվում է, որ հինգ կամ տասը տարի առաջ հեռանկարների և նույնիսկ իրողությունների գնահատման առումով մարդիկ ավելի լավատես էին, քան ներկայումս:

Երրորդ փաստն այն է, որ այլ պատճառների շարքում 2008–2013 թթ. էմիգրացվածները կարևորել են նախկինում իր բաժնով աչքի չընկնող այնպիսի երևույթ, ինչպիսին անարդարությունն է: Հիրավի՝ Հայաստանից մեկնած ամենչորրորդի համար որպես էմիգրացման պատճառ նշվել է հենց անարդարությունը: Այս արդյունքները խիստ մտահոգիչ են, հատկապես այն առումով, որ որպես Հայաստանի զարգացման ուղիներից մեկը, ըստ որոշ մասնագետների, սփյուռքի տնտեսական կարողությունների, ինչու չէ, նաև մարդկային ռեսուրսների լայնածավալ ներգրավումն է, կամ, այսպես կոչված՝ «մեծ վերադարձի» կազմակերպումը: Մեր կարծիքով, վաղաժամ է նման հույս փայփայելը, քանի դեռ Հայաստանում շարունակվում է արտագաղթը, և չեն հաղթահարվում այն ծնող պատճառները:

Այժմ անդրադառնանք յուրաքանչյուր դրդապատճառի կտրվածքով որոշ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների առանձնահատկություններին: Առաջին՝ աշխատատեղերի բացակայության գործոնն, ավելի բարձր մակարդակով է դրսևորվումմիջին կրթություն ունեցողների համախմբում՝ 31,5%-ից ավելին, ինչպես նաև գյուղական բնակչության մեջ՝ 31,3%, տղամարդկանց շրջանում կանանց համեմատությամբ բարձր է 7,1 տոկոսային կետով, իսկ ՀՀ տարածաշրջանային կտրվածքով աչքի են ընկնում Արմավի-

րի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերը, որտեղ տվյալ գործոնը բարձր է 36%-ից: Աշխատատեղերի բացակայության պատճառի մակարդակը միջինից (26,1%) բարձր է նաև 2010 թ. հետո մեկնածների շրջանում:

Հայաստանից մեկնելու որոշման հաջորդ պատճառը ըստ մասնագիտության աշխատանքի բացակայությունն է, որն առավել արդիական է բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների, Երևանից և Շիրակի մարզերից մեկնածների և չամուսնացածների համար: Էմիգրացիայի հաջորդ կարևոր շարժառիթը՝ Հայաստանի զարգացման հեռանկարի բացակայությունը, հաճախակի է նշվել 60 տարեկանից բարձր տարիքի մեկնածների համար, իսկ էմիգրացված կանանց շրջանում զբաղեցնում է առաջին տեղը՝ 27,1%, տարածաշրջանային առումով 30%-ից բարձր են Արագածոտնի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի արդյունքները:

Եթե նախորդ պատճառն ավելի հրատապ էր 60 տարեկանից բարձր անձանց համար, ապա անարդարությունը կարևորել են մինչև 20 տարեկանները (16,1%), ամուսնալուծվածները (16,4%), ինչպես նաև Արարատի (15,1%), Կոտայքի (17,7%) և Շիրակի (15,8%) մարզերից էմիգրացվածները:

Մեկնման հիմունքները: Մեր հետազոտության շրջանակներում կարևորվել է միգրացիայի օրինականության հիմնախնդրի պարզաբանումը, որը նախատեսվել է ուսումնասիրել ոչ միայն վիճակագրական հարցման, այլ նաև փորձագիտական տարբեր գնահատականների և համաշխարհային միգրացիոն հոսքերի կարգավորման քաղաքականության բազմակողմանի վերլուծությամբ: Այնուհանդերձ, սույն վիճակագրական հարցման արդյունքում միգրացիայի օրինականության մասին հնարավոր է դատել ելնելով միգրանտի արտերկիր մեկնելու հիմունքների վերլուծությունից: Դժվար է անվերապահ գնահատական տալ միգրացիայի օրինական կամ անօրինական ուղիներին, քանի որ մեր երկրից այլ երկրներ մարդկանց մեկնումը տեղի ունի բացառապես օրինական հիմունքներով: Այլ խնդիր է ընդունող երկրում մշտական կամ ժամանակավոր բնակություն հաստատելու օրինականացումը, հատկապես՝ երբ վերաբերում է աշխատանքային միգրացիային: Այդ տեսանկյունից նպատակահարմար ենք գտել, հարցման արդյունքներով, «օրինական» միգրանտ համարել անհատական հրավերով, աշխատանքային պայմանագրով և բնակվելու իրավունքով մեկնածներին, իսկ «անօրինական» ենք դիտարկում տուրիստական հրավերով, անձնական նախաձեռնությամբ և այլ հիմունքներով մեկնածներին: Ըստ նշված դասակարգման՝ հարցվածներից առավելապես արտագաղթել են անօրինական հիմունքներով՝ քաղաքային բնակչության 64.2%, իսկ գյուղական բնակչության 65.1%-ը: Օրինական հիմունքներով մեկնածների 20.9%-ը ստացել է անհատական հրավեր, 6.9%-ը՝ մեկնել է արտերկիր աշխատանքային պայմանագրով, իսկ

7.8%-ը՝ մշտական ապրելու իրավունքով: Անօրինական միգրանտների 66.5%-ը արական, իսկ 60.6%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են:

Տարածաշրջանային կտրվածքով միգրացիայի օրինականության դիտարկումը ցույց է տալիս, որ բոլոր մարզերից միգրացիան հիմնականում անօրինական է: Անօրինական միգրացիան ավելի մեծ չափերի է Արագածոտնի (87%), Կոտայքի (69.7%) և Գեղարքունիքի մարզերում (62.4%), իսկ օրինական միգրացիայի տեսանկյունից աչքի են ընկնում Վայոց Ձորի (59.2%), Լոռու (45.4%) և Սյունքի (42.1) մարզերը: Ինչ վերաբերում է Երևանին, ապա այստեղ ևս միգրանտների 58.5%-ը անօրինական է, օրինական միգրանտների 22.8% մեկնել է անհատական հրավերով, 10.4%-ը մշտական բնակություն հաստատելու իրավունքով, իսկ 8.3%-ը աշխատանքային պայմանագրով: Անկախ մեկնման հիմունքներից՝ արտերկրում զբաղվածության ոլորտները հիմնականում դրսևորվել են «վարձու աշխատող» և «ինքնազբաղվածներ» խմբերում: Օրինակ, անհատական հրավերով մեկնածների 43.8%-ը վարձու աշխատողներ են, իսկ 26.9%-ը ինքնազբաղված, աշխատանքային պայմանագրով մեկնածների մեջ համապատասխան ցուցանիշներն են՝ 71.0% և 16.1%: Անօրինական միգրանտների մեջ գործազուրկների տեսակարար կշիռը 6.5% է:

Էմիգրանտների վերադառնալու մտադրությունը: Եթե հավատանք Հայաստանից դուրս բնակվող ընտանիքի անդամներ (կամ ողջ կազմով բացակայող հարևան ընտանիքներ) ունեցող տնային տնտեսությունների հարցված անձանց, նրանց գնահատականները, համադրենք նախկին հետազոտությունների արդյունքներին, ապա կնկատենք, որ հանրապետությունից մեկնածների ռեէմիգրացման ներուժը դրսևորել է ցայտուն արտահայտված նվազման միտում: Այսպես, եթե 2008 թ. հարցվածները գտնում էին, որ ժամանակի ընթացքում անվերապահորեն վերադառնալու են էմիգրացված անդամների 60,3%-ը, ապա 2013 թ. նման վստահություն ունեին միայն յուրաքանչյուր հինգերորդի նկատմամբ՝ 19,6%: Որոշ չափով անսպասելի և ցնցող այս երևույթը հասկանալու և հետագայում դրա (ռեէմիգրացիոն ներուժի) մակարդակի բարձրացման մեխանիզմները մշակելիս առանձնահատուկ կարևորություն է ստանում այն ծնող պատճառների դերի և նշանակության բացահայտումը, որին մենք կանդրադառնանք մի փոքր ուշ:

Աղյուսակ 12-ի տվյալներից երևում է նաև, որ էմիգրացման վայրերից, ըստ նախնական սուբյեկտիվ գնահատականների, 2013 թ. արդեն չեն ցանկանում վերադառնալ էմիգրացվածների 65,4%-ը՝ 2008 թ. 18,0%-ի դիմաց: Ուշագրավ է նաև այն փաստը, որ արտերկրում գտնվող միգրանտների 40,9%-ը հաստատակամ է որոշել մնալ արտերկրում՝ որպես հիմք նշելով ընդունող երկրում արդեն հիմնավորվելը (ադապտացվելու) և ընտանիքի անդամներով վերամիավորվելը:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև ռեէմիգրացման ներուժի դիտարկումը ըստ սոցիալ-ժողովրդագրական այնպիսի կարևոր բնութագրիչների, ինչպիսիք են էմիգրանտի սեռը, տարիքը, բնակության նախկին վայրը (հայրենիքում), կրթական մակարդակը, ընտանեկան դրությունը, արտերկրում զբաղվածության կարգավիճակը, գործունեության ոլորտը և այլն: ՀՀ մարզերում ռեէմիգրացման ամենաբարձր ներուժն ունի Լոռու մարզը՝ 48,5%, այնուհետև Արմավիրի մարզը՝ 34,8%, Արագածոտնի և Արարատի մարզերը՝ 26,0 և 24,2%, իսկ ամենացածր ներուժը՝ Տավուշի մարզը՝ 7,4%, այնուհետև Երևանը՝ 12,2% ու Շիրակի մարզը՝ 12,7%:

Աղյուսակ 12

Էմիգրանտների բաշխումը ըստ հետագա միգրացիոն ծրագրերի, տոկոս

Վերադառնալու մտադրությունը	*2008 թ.*[16]	*2013 թ.*
1. Կվերադառնան	60,3	19,6
ա/ 1–3 տարվա ընթացքում	43,6	7,8
բ/ ի վերջո	16,7	11,8
2. Դժվարանում են պատասխանել	21,7	15,0
3. Չեն վերադառնա	18,0	65,4
ա/ երևի թե չվերադառնան	9,2	24,5
բ/ չեն վերադառնա	8,8	40,9
Ընդամենը	*100,0*	*100,0*

Էմիգրանտների չվերադառնալու մտադրությամբ «առաջատարները» նորից Երևանն (77,6%) ու Տավուշի մարզերն են (72,2%)՝ Գեղարքունիքի մարզի (72,2%) հետ միասին (հավելված 18): Հարկ է նշել, որ ըստ բնակության վայրի (գյուղ-քաղաք կտրվածքի) և ընտանեկան դրության հատկանիշների էմիգրանտների վերադառնալ-չվերադառնալու մտադրության մեջ չեն նկատվել էական տարբերություններ, ինչը չի կարելի ասել ըստ սեռի բաշխման մասին:

Գծապատկեր 15-ից երևում է, որ ռեէմիգրացվելու մտադրությունը տղամարդկանց մեջ կանանց համեմատությամբ կրկնակի բարձր է՝ 24,0%: Ավելին, չի պլանավորում վերադառնալ էմիգրացված կանանց 75%-ից ավելին, ինչը, հավանաբար, կարելի է բացատրել նրանց մեկնման նպատակով:

[16] ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2008 թ., էջ 63:



Գծապատկեր 15

Էմիգրանտների վերադառնալու մտադրությունը ըստ սեռի

Գծապատկեր 16-ի տվյալները վկայում են, որ ռեէմիգրացման ցանկությունը բարձր է հենց աշխատանքային միգրանտների մեջ՝ 24,0%, այն դեպքում, երբ մշտական բնակության և ընտանիքին վերամիավորվելու նպատակով մեկնածների մեջ այն չափազանց ցածր է, և ընդհակառակը, վերջիններիս մեջ ծայրահեղ բարձր է չվերադառնալու մտադրությունը՝ 83%-ից ավելին: Հայտնի է նաև, որ կանանց տեսակարար կշիռը մշտական բնակության կամ ընտանիքին վերամիավորվելու նպատակով մեկնածների մեջ (47,6%) կիսով չափ բարձր է աշխատանքային միգրացիայում ընդգրկված կանանց բաժն ից (30,6%), ինչն էլ հաստատում է վերոնշյալ վարկածը:



Գծապատկեր 16

Էմիգրանտների վերադառնալու մտադրությունը ըստ մեկնման նպատակի

Ուղիղ կապ է արձանագրվել էմիգրանտի տարիքի և հայրենիք վերադառնալու նրա մտադրության միջև, հետևաբար՝ նաև հակադարձ կապ՝ տարիքի և չվերադառնալու մտադրության միջև: Այսպես, մինչև 20 տարեկան միգրանտների Հայաստան վերադառնալու մտադրությունը 12,2%-ից տարիքի աճմանը զուգընթաց աստիճանաբար բարձրանում է՝ 60 տարեկան և բարձր տարիքի անձանց շրջանում հասնելով 27,3%-ի (գծապատկեր 17):



Գծապատկեր 17

Էմիգրանտների վերադառնալու մտադրությունը ըստ տարիքի

Բավական տարբերակված է ըստ մեկնման վայրի ռեէմիգրացիայի մտադրությունը: Հայրենիք վերադառնալու ամենաբարձր մտադրություն ունի Ռուսաստանի Դաշնություն էմիգրացվածների 24.6%-ը, որը ամենաբարձր ցուցանիշն է: Ավելի քան երկու անգամ ցածր է Եվրոպայից ռեէմիգրացվելու մտադրությունը՝ 11.5%, իսկ ԱՄՆ-ից և Կանադայից վերադառնալու մտադրությունը գրեթե անհավանական է՝ ընդամենը 2.9% (գծապատկեր 18): Քանի որ էմիգրանտների ընդհանուր թվաքանակում Ռուսաստան մեկնածների բաժինը 68.6% է, իսկ աշխատանքային միգրանտների մեջ այն ավելի բարձր է՝ 79.3%, այդ իսկ պատճառով ուսումնասիրված էմիգրանտների վերադարձի ներուժը միջինում կազմում է 19.6%: Դրանից քիչ բարձր է անձնական նախաձեռնությամբ էմիգրացվածների վերադառնալու մտադրությունը՝ 22.2%, որից էլ կիսով չափ բարձր է աշխատանքային հրավերով մեկնածների մտադրությունը՝ 33.3%: Քիչ հավանական է ընակվելու իրավունքով մեկնածների վերադարձը՝ ընդամենը 3.7%:



Գծապատկեր 18

Էմիգրանտների վերադառնալու մտադրությունը ըստ էմիգրացման վայրի

Քանի որ մեկնածների կազմում միջինից բարձր ռեէմիգրացման ներուժ գրանցվել է ինչպես Ռուսաստանի Դաշնություն, այնպես էլ աշխատանքային հրավերով և անձնական նախաձեռնությամբ մեկնածների համախմբում, ապա տրամաբանական է, որ այն միջինից բարձր կլինի նաև մեկնման վայրում իրենց զբաղվածության կարգավիճակը որպես վարձու աշխատող և ինքնազբաղված հաստատածների մեջ, դրանք համապատասխանաբար, 26.3 և 19.8% են: Զարմանալիորեն, չվերադառնալու մտադրության բարձր մակարդակով աչքի է ընկնում զբաղվածության պասիվ կարգավիճակ ունեցող զանգվածը՝ տնային տնտեսուհիները, գործազուրկները և կենսաթոշակառուները, որոնց տեսակարար կշիռը, ճիշտ է, էմիգրանտների ընդհանուր թվաքանակում զգալի չէ (18,9%), սակայն բավական հատկանշական է հայրենիք չվերադառնալու նրանց մտադրությունը:

Եթե մոտ ժամանակներս չեն պատրաստվում վերադառնալ վարձու աշխատողների 58.9%, ապա դրան հակված են տնային տնտեսուհիների 77.7%-ը, գործազուրկների 82.9%-ը և կենսաթոշակառուների՝ 83.9%-ը (հավելված 19): Ամենայն հավանականությամբ, դա բացատրվում է ընդունող երկրում սոցիալական ապահովության բազմապիսի ծրագրերի առկայությամբ և էմիգրանտների համար դրանց հասանելիությամբ, ինչպես նաև հայրենիքում համանման սոցիալական խմբերին տրամադրվող անհամեմատ փոքր (աղքատության շեմից ցածր) հատուցումներով:



Գծապատկեր 19

Էմիգրանտների վերադառնալու մտադրությունը ըստ էմիգրացման ժամանակի (%)

Գծապատկեր 19-ը պարզորոշ ցուցադրում է, թե ինչպես է ռեէմիգրացիոն ներուժը նվազում էմիգրացման տևողության աճմանը զուգընթաց: Սովորաբար, վերադառնալու մտադրությունը բարձր է առաջին անգամ էմիգրացվելու դեպքում, ինչպես նաև էմիգրացման առաջին տարում: Սույն հետազոտությունում այն 2013 թ. մեկնածների համար 34,6% է, իսկ 2012 թ. մեկնածների համար՝ արդեն 20.8%: Ակնհայտ է, որ մեկ-երկու տարի հարմարվելուց հետո, էմիգրանտը, բարելավելով իր աշխատանքային, սոցիալական, ինչպես նաև իրավական կարգավիճակը, վերանայում է (կամ հետաձգում) հայրենիք վերադառնալու՝ նախկինում ունեցած մտադրությունը: Այս իմաստով՝ ծայրաստիճան անհանգստացնող է այն փաստը, որ մինչև 2008 թ. էմիգրացվածներից մտադիր է վերադառնալ 5.4%-ը, իսկ ընդամենը 2–5 տարի վաղեմության էմիգրացվածներից՝ միայն յուրաքանչյուր վեցերորդը: Համեմատության համար նշենք, որ 1991–1995 թթ. ՀՀ-ից մեկնածների թվաքանակից նույն ժամանակաշրջանում վերադարձել են նրանց 25.3%-ը, իսկ 2002–2007 թթ.՝ 31.0%-ը:

Դրամական փոխանցումներ: Վիճակագրական հարցման արդյունքները հնարավորություն են ընձեռում որոշակի պատկերացում կազմելու էմիգրանտների՝ Հայաստանի Հանրապետություն դրամական միջոցներ փոխանցելու հակվածության, դրանց ներդրումային ներուժի և օգտագործման ուղղությունների մասին: Լայն տարածում ստացած, գուցե նաև մի շարք երկրների փորձով հաստատված պատկերացումն այն մասին, որ միգրացիան ունի էական տնտեսական դրական ազդեցություն դոնոր երկրների

վրա՝ աճող դրամական հոսքերի ձևով, մեր հետազոտության արդյունքներով, կարծեք թե հերքվում է:

Միգրացիայի հարատևումը վերջին տարիներին վերաճել է ընտանեկան էմիգրացիայի և հանգեցրել էմիգրանտի և հայրենիքում մնացած հարազատների կապի թուլացմանը: Կապի թուլացումը ընտանիքի բոլոր անդամների էմիգրացիայի հետևանքով հայրենիքի հետ առնչության նվազումն է կամ դրա բացակայությունը: Այս պարագայում ընտանեկան միգրացիան տեղավորվում է տնտեսագիտության տեսության մեջ հայտնի և լայն տարածում ստացած «սահմանային արտադրողականություն» և «սահմանային օգտակարություն» հասկացությունների շրջանակներում և ձեռքբերում սահմանային բովանդակություն: Այսինքն՝ ընտանիքից յուրաքանչյուր հաջորդ էմիգրացվածը նվազեցնում է ընտանեկան միգրացիայի օգտակարության էֆեկտը: Այստեղ «օգտակարության էֆեկտ» նշանակում է ընտանիքի անդամներից հայրենիք ուղղված դրամական միջոցների ծավալը: Մեր հարցումներում դրամական փոխանցումների մասին արժեքային գնահատականները տեղ չեն գտել, սակայն առանձին հարցերի պատասխաններից հնարավոր է որոշակի պատկերացում կազմել իրավիճակի մասին:

Արդեն նշվել է, որ սույն հետազոտության շրջանակներում տեղեկություններ են հավաքագրվել արտերկում առնվազն մեկ անդամ ունեցող 750, ինչպես նաև նրանց անմիջական հարևանությամբ բնակվող, սակայն ամբողջ ընտանիքով էմիգրացված, 142 տնային տնտեսությունների վերաբերյալ: Ընտրանքում ընդգրկված 750 տնային տնտեսություններից հետազոտության պահին արտերկրում են գտնվել 984 չափահաս անդամ, իսկ ընտանիքով էմիգրացվածների համակցությունում՝ 368 մարդ:

Նախորդ հետազոտությունների արդյունքների հետ համադրելիությունն ապահովելու, ինչպես նաև դրամական փոխանցումների՝ ըստ օգտագործման ուղղությունների վերլուծություն իրականացնելու համար նպատակահարմար է որպես դիտարկման օբյեկտ վերցնել Հայաստանում գտնվող և արտերկրում առնվազն մեկ անդամ ունեցող տնային տնտեսությունների համակցությունը, այսինքն՝ օբյեկտը փոքրացվել է ամբողջ ընտանիքով մեկնածների մասով:

Աղյուսակ 13-ի տվյալներից երևում է, որ վերջին տարիներին մոտ 10 տոկոսային կետով նվազել է արտերկրում միգրանտ-անդամներից դրամական փոխանցումներ ստացող տնային տնտեսությունների բաժինը՝ 2013 թ. դառնալով 61,3%: Հարկ է նշել, որ հետազոտության շրջանակներում չի պարզաբանվել ինչպես փոխանցումների հաճախականությունը (կանոնավոր, ժամանակ առ ժամանակ, հազվադեպ), այնպես էլ այն չստանալու պատճառները (հնարավորություն չեն ունեցել, անհրաժեշտություն չի առաջացել, չեն ցանկացել):

Աղյուսակ 13

Արտերկրում միգրանտ ունեցող տնային տնտեսությունները 2008–2013 թթ. ըստ դրամական փոխանցումներ ստանալու փաստի, տոկոս[17]

Դրամական փոխանցումներ ստանալու փաստը	*2008 թ.*	*2008–2013 թթ.*
Ստանում են	71,0	61,3
Չեն ստանում	29,0	38,7
Ընդամենը	*100,0*	*100,0*

Հավանաբար, հարցվողների որոշակի մասը թաքցնում է դրամական փոխանցումներ ստանալը՝ «փորձանքից հեռու»: Եթե դրամական փոխանցումներ ստացել են հարցված 750 տնային տնտեսություններից 460-ը կամ 61,3%-ը, ապա դրամական փոխանցումներ կատարել են արտերկրում գտնվող այդ տնային տնտեսությունների 507 անդամ, որը ընդհանուրի 51,5%-ն է (507/984): Հետազոտության արդյունքներից պարզվել է նաև, որ 47 տնային տնտեսություն (կամ ընդամենի 6,3%-ը) արտերկրից դրամական փոխանցումներ ստացել են միաժամանակ երկու անձանցից:



Գծապատկեր 20

Արտերկրում գտնվող միգրանտները ըստ իրենց տնային տնտեսություններին դրամական փոխանցումներ կատարելու հնարավորության, (%)[18]

[17] Միգրանտների կողմից Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումներ, Երևան 2009, էջ 21:

Գծապատկեր 20-ից երևում է, որ 2002–2007 թթ. համեմատությամբ 2013 թ. էմիգրանտների դրամական փոխանցումներ կատարելու հակվածությունը 30,2 տոկոսային կետով նվազել է: Մինչդեռ նույնը չի կարելի ասել ըստ ՀՀ բանկային համակարգով ֆիզիկական անձանց անունով ոչ առևտրային նպատակով դրամական փոխանցումների դինամիկայի: Այսպես, եթե 2008 թ. այդ փոխանցումների ծավալը կազմել է 1635,3 մլրդ ԱՄՆ դոլար, ապա 2012 թ. նույնիսկ գերազանցել է նշված մակարդակը՝ 1687,2 մլրդ դոլար[19]: Հետևաբար, ՀՀ կատարված դրամական փոխանցումների ծավալը չի նվազում, սակայն նվազում է փոխանցում կատարելու հակվածությունը, ինչը նշանակում է, որ նույն տեմպերով արտերկրում ավելանում է Հայաստանից արտագաղթածների թվաքանակը:



Գծապատկեր 21

Դրամական փոխանցումների ստացումը ըստ մարզերի

Գծապատկեր 21-ից երևում է, որ եթե արտերկրում գտնվող հայաստանյան տնային տնտեսության անդամ-միգրանտներից դրամական փոխանցում ստանում են դրանց 61,3%-ը, ապա տվյալ ցուցանիշի 70%-ից բարձր արժեքով աչքի են ընկնում Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերը, իսկ ամենացածր մակարդակը գրանցվել է

[18] ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, Երևան 2008, էջ 60:
[19] Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների:

Երևանում՝ 48,4%: Արտերկրում գտնվող տնային տնտեսությունների անդամների համար հարազատներին դրամական օգնություն առաքելու հիմնական ձևը բանկային համակարգն է, որի միջոցով ստացվել է տրանսֆերտների 79.5%-ը, երբ 2008 թ. 85,6% էր: Իսկ ծանոթների ու բարեկամների առձեռն փոխանցմամբ ստացվել է դրամական օգնության միայն 20,5%-ը: Արտերկրում գտնվող տնային տնտեսության անդամ-միգրանտներից դրամական փոխանցումներ ստանում են քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների 58,1%-ը, այն դեպքում երբ գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների՝ 70,5%-ը:

Այսուհետ նպատակահարմար ենք գտնում տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբերի՝ դրամական փոխանցում կատարելու ինտենսիվությունը վերլուծել այն ուղարկողների, այլ ոչ թե ստացողների կտրվածքով: Այսպես, դրամական փոխանցումների հակվածությունն ավելի բարձր է գյուղական բնակավայրերից էմիգրացվածների շրջանում՝ 63,0%, իսկ քաղաքային բնակավայրերից մեկնածների շրջանում՝ 47,9%:



Գծապատկեր 22

Էմիգրանտների դրամական փոխանցումների կատարումը ըստ տարիքի, տոկոսով

Ինչ վերաբերում է իգական սեռի էմիգրանտներին, ապա վերջիններից դրամական փոխանցում ուղարկողների բաժինը փոքր է՝ 21,9%՝ տղամարդկանց 64,3%ի համեմատ: Էմիգրանտների տրանսֆերտային ակտիվության վրա ազդում է նաև նրանց ընտանեկան դրությունը: Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները՝ դրամական փոխանցումների բարձր ակտիվություն են դրսևորում երբեք չամուսնացածներն ու ամուսնալուծվածները՝ համապատասխանաբար 61,0% և 60,5% (հավելված 20):

Արտերկրում գտնվող մինչև 20 տարեկան էմիգրանտների կողմից Հայաստան դրամական միջոցներ ուղարկում են նրանց 33,3%-ը, 20–29 տարեկանների՝ 43,3%-ը, 30–39 տարեկանների 48,6%-ը, 40–49 տարեկանների՝ 60,5%-ը և 50–59 տարեկանների՝ 59,1%-ը (գծապատկեր 22): Նկատենք, որ միգրանտների տարիքի մեծացմանը զուգահեռ արտերկրից դրամական փոխանցում կատարելու ակտիվությունն աճում է և առավելագույնին է հասնում 40–59 տարեկան տղամարդկանց համակցությունում՝ 69,7%:

Մինչև 20 տարեկաններից կատարված փոխանցումների մակարդակի ցածր լինելը կարելի է բացատրել նրանով, որ այդ տարիքային խումբը դեռ նոր է մուտք գործում աշխատանքի շուկա, չունի բավարար փորձ և հմտություններ, ուստի և կատարում է ոչ որակյալ, ցածր վարձատրվող աշխատանք: Հետևաբար, այս խմբի էմիգրանտների եկամուտների մակարդակը կարող է չբավականացնել ոչ միայն ՀՀ դրամական փոխանցումներ կատարելու, այլ նույնիսկ սեփական կենսական նվազագույն պահանջմունքները բավարարելուն:



Գծապատկեր 23

Էմիգրանտների դրամական փոխանցումների կատարումը ըստ կրթական մակարդակի, տոկոսով

Գծապատկեր 23-ից երևում է, որ դրամական փոխանցումներ ավելի հաճախ են կատարում միջին մասնագիտական կրթություն ունեցողները՝ 60,9%, այնուհետև ընդհանուր միջնակարգ կրթությամբ էմիգրանտները՝ 56,5%: Բարձրագույն կրթություն ունեցողները տրանսֆերտների հարցում այնքան էլ ակտիվ չեն՝ 44.1%: Հավանաբար, դա բացատրվում է նրանով, որ միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցողները հիմնականում կողմնորոշված են դեպի Ռուսաստան և ԱՊՀ այլ երկրներ, որտեղ նրանք ներգրավված են բարձր որակավորում չպահանջող աշխատանքներում (շինարարություն, բեռնափոխադրումներ և այլն), մինչդեռ բարձրագույն կրթություն և բարձր որակավորում ունեցող էմիգրանտները հիմնականում կողմնորոշվում են դեպի զարգացած երկրներ, ինչպես, օրինակ՝ ԱՄՆ, Կանադա և ԵՄ երկրներ, իսկ դա նշանակում է, որ նրանց մեկնումը կրում է երկարատև (կամ մշտական) բնույթ, ընդ որում՝ ընտանիքի անդամների հետ: Սա «ուղեղների ներգրավման»՝ Արևմուտքի երկրների քաղաքականության շարունակականության դրսևորումն է:

Իրոք, դրամական փոխանցում կատարելու ակտիվությունը համեմատաբար բարձր է Ռուսաստան մեկնածների շրջանում՝ 59,8%, այնուհետև՝ ԱՊՀ այլ երկրներում հանգրվանածների՝ 48,3%: Եվրոպական երկրներ, ԱՄՆ և Կանադա մեկնածներն ավելի հազվադեպ են տրանսֆերտներ ուղարկում, քան Ռուսաստանից և Ուկրաինայից, ինչն էլ վկայում է դեպի այդ երկրներ ընտանեկան արտագաղթի, ընտանիքի վերամիավորման գերակայության մասին (գծապատկեր 24):



Գծապատկեր 24

Էմիգրանտների դրամական տրանսֆերտների առաքումը ըստ մեկնման երկրի, տոկոսով

Գծապատկեր 25-ից ակնհայտ է դառնում, որ ժամանակի ընթացքում դրամական փոխանցումները դրսևորում են նվազման աստիճանական միտում. հինգ տարվա ընթացքում՝ 57,9%-ից 2013 թ. դարձել է 49,4%: Ըստ էության 2008–2009 թթ. սկսած դեպի ՀՀ տրանսֆերտների կրճատումը (նույնանման երևույթներ դրսևորվել են տրանֆերտային ռեցիպիենտ այլ երկրներում) պայմանավորված է հիմնականում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, որի հետևանքները զգացվել են նաև հաջորդ տարիներին:

Հայրենիք դրամական փոխանցումներ կատարելու հնարավորությունը կախված է նաև արտերկրում էմիգրանտների գործունեության ոլորտից: Այսպես, ըստ հարցումների տրանսֆերտային ակտիվությունը բարձր է շինարարության և տրանսպորտի ոլորտներում զբաղվածների շրջանում՝ համապատասխանաբար 76,0% և 70,8%:



Գծապատկեր 25

Էմիգրանտների դրամական տրանսֆերտների առաքումը ըստ մեկնման ժամանակի, տոկոսով

Առևտրի ոլորտում զբաղվածների փոխանցման ակտիվությունը 57,5% է (գծապատկեր 26): Նշված ոլորտներում աշխատելու նպատակով հայերը հիմնականում մեկնում են Ռուսաստան: Համեմատաբար հազվադեպ են տրանսֆերտներ ստացվում այն միգրանտներից, որոնք զբաղված են սպասարկման ու ծառայությունների, արդյունաբերության և այլ ոլորտներում:



Գծապատկեր 26

Էմիգրանտների դրամական տրանսֆերտների կատարումը ըստ գործունեության ոլորտների, տոկոսով

Ըստ զբաղվածության կարգավիճակի՝ Հայաստան դրամական փոխանցումներ կատարելու բարձր հակվածությամբ են բնորոշվում վարձու աշխատողները, գործատուներն ու ինքնազբաղվածները, որոնց կազմում փոխանցողների տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմում է 61,3%, 63,2% և 57,9% (գծապատկեր 27): Սա վկայում է, որ էմիգրանտների հիմնական մասն աշխատանքային տարիքում գտնվող աշխատուժն է, որը մեկնում է սեփական զբաղվածությունն ապահովելու նպատակով:

Ընդ որում՝ պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ արտասահման մեկնած հայ գործատուներից դրամական փոխանցումները բավական զգալի են, ինչը նշանակում է, նախ, այն, որ գործարար ձիրքով օժտված անձինք նախընտրում են գործարարությամբ զբաղվել այլ երկրներում, ինչի հետևանքով ոչ միայն տեղի է ունենում կապիտալի արտահոսք, այլ նաև կառավարման ու կազմակերպական ունակությունների «փախուստ»: Եվ երկրորդ, պրոֆեսիոնալները ձգտում են ոչ միայն դեպի կապիտալը, այլ տեղաշարժվում են կապիտալով: Սա նույնպես վկայում է, որ Հայաստանն ունի խնդիր՝ գրավիչ, արդյունավետ գործարար միջավայր ձևավորելու: Հակառակ դեպքում՝ անհասկանալի է, թե ինչու ներքին ներդրումների սղության, օտարերկրյա ներդրումների հսկայական կարիքի պայմաններում մեր երկրից տեղի է ունենում դրամական միջոցների արտահոսք:



Գծապատկեր 27

Էմիգրանտների դրամական փոխանցումները ըստ նրանց զբաղվածության կարգավիճակի, տոկոսով

Հետաքրքրական է, որ դրամական փոխանցումներ կատարում են նաև արտասահմանում գտնվող գործազուրկ, տնային տնտեսուհի և թոշակառու էմիգրանտները՝ համապատասխանաբար 11,8%, 4,2% և 7,1%:

Դրամական փոխանցումներ չեն կատարում հիմնականում այն էմիգրանտները, որոնք մեկնել են տուրիստական հրավերով (67,0%) և մշտական բնակություն հաստատելու նպատակով (59,7%): Հետազոտությունն սկսելիս՝ ակնկալում էինք, որ աշխատանքային պայմանագրով, ինչպես նաև անձնական նախաձեռնությամբ ավելի մեծ թվով մեկնածներ պետք է դրամական փոխանցումներ կատարեին հայրենիք, սակայն պարզվեց, որ դրամական միջոցներ ուղարկում են համապատասխանաբար 59,0% և 56,6%-ը:

Նկատենք, որ դրամական փոխանցումներ կատարում են հիմնականում 1–3 տարվա ընթացքում հայրենիք վերադառնալու մտադրություն ունեցող էմիգրանտները՝ 81,7%, և ի վերջո վերադառնալու մտադրություն ունեցողները՝ 63,9%: Չվերադառնալու կամ հավանաբար չվերադառնալու մտադրություն ունեցողների համախմբերից դրամական փոխանցումներ կատարում են համապատասխանաբար 37,7%-ը և 50,4%-ը: Այլ խոսքով՝ միգրանտների վերադառնալու մտադրությունը հակադարձ համեմատական է նրանց կողմից դրամական փոխանցումներ կատարելուն:

Կախված նրանից, թե էմիգրանտն ում հետ է մեկնել արտերկիր, դրամական փոխանցումների հաճախականությունը զգալիորեն տարբեր է: Այս-

պես, դեպի Հայաստան դրամական փոխանցումների բաժինը փոքր է էմիգրացվածների խմբում, ովքեր արտերկիր են մեկնել ընտանիքով՝ 38,3%: Միևնույն ժամանակ հիմնական փոխանցումները կատարում են միայնակ կամ գործընկերների հետ էմիգրացվածները, որոնց՝ տարբեր եղանակներով կատարած փոխանցումները կազմում են համապատասխանաբար 65,7% և 62,3%:

Այն, որ արտերկիր մշտական բնակություն հաստատելու, ընտանիքի հետ վերամիավորվելու նպատակով էմիգրացվածների փոքր մասն է դրամական փոխանցում կատարում, մեկ անգամ ևս վկայում է ընտանեկան միգրացիայի ակտիվացման մասին: Իսկ սովորելու և բուժվելու նպատակով մեկնածներից պակաս փոխանցումները բացատրելի է. նրանք աշխատանքային միգրանտներ չեն, ուստի փոխանցումները կարելի է դիտարկել որպես վերջիններիս խնայողություններ: Այսպես, հայրենիքում բնակվող իրենց հարազատներին դրամական փոխանցում չեն կատարում մշտական բնակություն հաստատելու նպատակով էմիգրացվածների 73.4%-ը, ընտանիքի վերամիավորման նպատակով մեկնածների 77.6%-ը, բուժման նպատակով մեկնածների՝ 75%-ը և սովորելու և կրթությունը շարունակելու նպատակով մեկնածների՝ 69.6%-ը:

Հայաստան մուտք գործող տրանսֆերտների հիմնական մասն օգտագործվում է ընթացիկ սպառողական ծախսերի վրա: Այսպես, հարցված 750 տնային տնտեսություններից դրամական փոխանցումներ ստացել են 460-ը կամ 61,3%-ը, իսկ նրանցից 421-ը կամ 91,5%-ը արտերկրից դրամական միջոցների օգտագործման հիմնական նպատակ նշել են ընթացիկ պահանջմունքների բավարարումը (հիշեցնենք, որ ռեսպոնդենտները, այստեղ ևս հնարավորություն են ունեցել նշելու մինչև երեք պատասխան):

Տրանսֆերտների օգտագործման երկրորդ ուղղությունը բուժման ծախսերն են, որ կատարել են դրամական փոխանցումներ ստացողների 17,0%-ը, պարտքեր և վարկեր մարել են նրանց 10,0%-ը, իսկ ուսման վարձի վճարումը կամ շինարարական (նորոգման) աշխատանքների իրականացումը ունեցել են միևնույն տեսակարար կշիռը՝ 7,2%: Տրանսֆերտներ ստացող տնային տնտեսությունների կազմում շատ ցածր են ներդրումներ և խնայողություններ կատարողները՝ համապատասխանաբար 1,1% և 2,0%: Փաստորեն արտերկրում առնվազն մեկ միգրանտ ունեցող ՀՀ տնային տնտեսությունների 56,1%-ը (421/750) չի կարողանում բավարարել կենսական պահանջմունքներն առանց տրանսֆերտների, ինչը, կարծում ենք, Հայաստանի տնտեսական անվտանգության տեսանկյունից բավական լուրջ խնդիր է:

Գծապատկեր 28-ում ներկայացված է արտերկրից տնային տնտեսության անդամ միգրանտներից դրամական փոխանցումներ ստացող տնային տնտեսությունների համախառն եկամտի մեջ փոխանցումների բաժնի կա-

ռուցվածքը, որը ըստ 5 հավասարամեծ միջակայքերի գրեթե հավասարապես է բաշխված: Տրանսֆերտների օգտագործման կառուցվածքում (տնային տնտեսությունների նկատմամբ) սպառողական ընթացիկ ծախսերի բաժինը ըստ S/S համախառն եկամտի մեջ վերջիններիս բաժինների խմբերի ունեն աճի որոշակի միտում: Այսպես, եթե համախառն եկամտի մեջ տրանսֆերտների բաժինները առաջին խմբում (մինչև 20%) կազմում է 87,8%, ապա աստիճանաբար աճելով այն հինգերորդ խմբում դառնում է 95,3%:



Գծապատկեր 28

Դրամական փոխանցումների բաժնեմասը՝ այն ստացող տնային տնտեսությունների համախառն եկամտի մեջ, տոկոսով

Գծապատկեր 29-ից երևում է, որ տրանսֆերտների տարբեր նպատակներով օգտագործման ակտիվությունն առաջին խմբում նվազագույնն է, քանի որ հենց այդ խումբն է առավել ապահովվածը:

Երկրորդ խմբում (20–40%) մյուս խմբերի համեմատությամբ բարձր են բուժման ծախսերի (23,8%) և պարտքերի (կամ վարկերի) մարման (18,8%) տոկոսաբաժինները: Անշարժ գույքի ձեռքբերման, վերջինիս շինարարության կամ վերանորոգման նպատակով օգտագործված տրանսֆերտների բաժինները համեմատաբար բարձր են երրորդ և չորրորդ խմբերում՝ 12,6%, նույն խմբերում միջին մակարդակի համեմատությամբ ցածր չեն նաև բուժման ծախսերի բաժինները՝ համապատասխանաբար 21,1% և 17,2%: Եթե ուսման վարձի վճարումը որպես տրասֆերտի օգտագործման նպատակներից մեկը նշել են դրամական փոխանցում ստացող տնային տնտեսու-

թյունների 7,2%-ը, ապա չորրորդ խմբում (60–80%) վերջինիս բաժինը կազմել է 11,5%:



Գծապատկեր 29

Դրամական փոխանցումների բաժնեմասը ՏՏ համախառն եկամուտների մեջ և դրանց օգտագործման նպատակը

4 ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Համայնքների մակարդակով միգրացիոն գործընթացների հետազոտության նպատակով կազմվել է հարցաթերթիկ, որտեղ կարևորվել են այնպիսի ցուցանիշների վերլուծության անհրաժեշտությունը, ինչպիսիք են համայնքներում մշտական և առկա բնակչության թիվը, տնային և գյուղացիական տնտեսությունների քանակում եղած տեղաշարժերը, գյուղացիական տնտեսություններում զբաղվածությունը՝ ըստ անասնաբուծության և հողագործության ոլորտների: Կարևորվել է նաև համայնքների ղեկավարների կարծիքը և գնահատականը արտագաղթի դրդապատճառների և միգրանտների կողմից հայրենիք ուղարկված դրամական փոխանցումների ծախսման հիմնական ուղղությունների մասին (հավելված 21): Հարցում անցկացվել է լեռնային և դաշտավայրային շրջանների տասը համայնքներում՝ 5:5 հարաբերակցությամբ:

Ակնկալում էինք գյուղական համայնքների ղեկավարներից ստանալ օբյեկտիվ և անաչառ տեղեկատվություն և գնահատականներ, ուստի պայմանավորվել էինք չհրապարակել, թե որ համայքներում ենք անցկացրել մեր հարցումները: Համատարիմ մնալով մեր հավաստիացմանը՝ սույն վերլուծության շրջանակներում հարցման ենթարկված համայնքները համարակալել ենք՝ 1–5 համարներով նշել ենք դաշտավայրային, իսկ 6–10 համարներով՝ լեռնային շրջանների համայնքները:

Ըստ հարցման արդյունքների ուսումնասիրվող համայնքներում մշտական և առկա բնակչության թիվը, որը համադրվել է 2011 թ. մարդահամարի արդյունքների համապատասխան տվյալներին, ներկայացված է աղյուսակ 14-ում: Ինչպես տեսնում ենք՝ միայն առաջին չորս համայնքների ղեկավարներն են կարողացել չխախտել մեր պայմանավորվածությունը և մշտական և առկա բնակչության մասին նրանց տրված տեղեկատվությունը էապես տարբերվում է պաշտոնական վիճակագրության հրապարակած ցուցանիշներից: Չորս համայնքների կտրվածքով շեղումը ըստ մշտական բնակչության 992 է, իսկ ըստ առկա բնակչության՝ 1028 մարդ: Դաշտավայրային շրջանի հինգերորդ համարի համայնքի ղեկավարն ակնհայտ «ջանասիրություն» է ցուցաբերել մեր խնդրանքին և ներկայացրել է ցուցանիշներ, որոնք գերազանցում են պաշտոնական վիճակագրության հրապարակած տվյալները՝ մշտական բնակչության դեպքում՝ 26,6%-ով, առկա բնակչության՝ 12,3%-ով:

Ընդհանուր առմամբ, պաշտոնական վիճակագրության համեմատությամբ 5–10 համայնքների մշտական և առկա բնակչության թվաքանակի մասին ցուցանիշների շեղումը եղել է համապատասխանաբար 1530 և 547

մարդ: Ըստ հարցման արդյունքների՝ տասը համայնքներում առկա բնակչությունը մշտական բնակչության 83,4%-ն է, իսկ ըստ պաշտոնականի՝ 91,1%-ը: Ուշադրության արժանի է այն, որ հարցման արդյունքներով ճշգրտված մշտական բնակչության թիվը գերազանցում է պաշտոնական աղբյուրներում նշվածին, իսկ առկա բնակչության դեպքում տեղի ունի հակառակը:

Աղյուսակ 14-ի տվյալները ցույց են տալիս, որ բնակչության արտահոսքը ուսումնասիրվող տարիներին ավելի մեծ է եղել լեռնային շրջաններից: Եթե դաշտային շրջաններից բացակայում է մշտական բնակչության 11,9%-ը, ապա լեռնային շրջաններից՝ 27,9%-ը: Բոլոր համայնքներից բացակայում է մշտական բնակչության 16,6%-ը:

Աղյուսակ 14

Հետազոտվող գյուղական համայնքների մշտական և առկա բնակչության թիվը՝ ըստ հարցման արդյունքների և 2011 թ. մարդահամարի տվյալների

Համայնք	*Բնակչության թիվը՝ ըստ հարցման*		*Բնակչության թիվը՝ ըստ 2011 թ. մարդահամարի*		*Բնակչության թվաքանակի տարբերություն*	
	Մշտական բնակչություն	*Առկա բնակչություն*	*Մշտական բնակչություն*	*Առկա բնակչություն*	*Մշտական (1-3)*	*Առկա (2-4)*
Ա	1	2	3	4	5	6
1	2900	2500	2994	2981	-94	-481
2	950	890	1007	957	-57	-67
3	1809	1720	1853	1769	-44	-49
4	1163	957	1960	1388	-797	-431
5	3435	2970	2713	2644	+722	+326
6-7[20]	1007	787	972	926	+35	-139
8	2650	1800	1960	1640	+690	+160
9	210	165	182	148	+28	+17
10	318	262	263	218	+55	+44
Ընդամենը	**14442**	**12051**	**13904**	**12671**	**+538**	**-620**

Առաջին երեք համայնքներում ուսումնասիրվող առանձին տարիներին (6 տարվա կտրվածքով՝ ընդգրկում է 2008–2013 թթ.) տնային և գյուղացիական տնտեսությունների թիվը չի փոխվել, իսկ չորրորդում 2008–2012 թթ. 189 տնային տնտեսությունից մնացել է 174-ը, հաջորդ տարում դրանց թիվը ավե-

[20] Վեցերորդ և յոթերորդ համարի գյուղերը միավորված են մեկ համայնքի մեջ:

լացել է 2-ով: Հինգերորդ համայնքում ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերջին տնային տնտեսությունների թիվը կրճատվել է 4-ով՝ սկզբի համեմատությամբ: Ի տարբերություն դաշտավայրային համայնքների՝ լեռնային համայնքներում առկա տնային տնտեսությունների թիվը, ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերջի դրությամբ, էապես կրճատվել է: Վեցերորդ համայնքում (7-րդ գյուղի հետ համատեղ) դրանց թիվը կրճատվել է 85-ով, ութերորդում՝ 120-ով, իններորդում՝ 18-ով, տասներորդում՝ 17-ով: Ընդ որում՝ իններորդ համայնքում առկա տնային տնտեսությունների թիվը 5 տարի շարունակ եղել է անփոփոխ, իսկ 2013 թ. կտրուկ նվազել է՝ 50-ից հասնելով 32-ի: Մնացած լեռնային համայնքներում դիտարկվել է գյուղացիական տնտեսությունների թվի նվազում՝ ուսումնասիրվող բոլոր տարիներին:

Գյուղացիական տնտեսություններում պատկերը հետևյալն է. դաշտավայրային համայնքների գյուղացիական տնտեսությունների թիվն առաջին երեք համայնքներում ուսումնասիրվող տարիներին չի փոփոխվել և գրեթե կրկնակի գերազանցում է տնային տնտեսությունների թվին: Դաշտավայրային չորրորդ և հինգերորդ համայնքների տնային տնտեսությունների թիվը ուսումնասիրվող ողջ ժամանակահատվածում միշտ պակաս է եղել գյուղացիական տնտեսություններից: Ինչպես տնային տնտեսությունների դեպքում՝ նշված համայնքներում գյուղացիական տնտեսությունների թիվը ևս նվազել է. 4-րդ համայնքում՝ 2013 թ-ին 2008 թ. համեմատությամբ 22-ով, իսկ 5-րդում՝ 9-ով:

Լեռնային շրջանների համայնքներում գյուղացիական տնտեսությունների թիվը ուսումնասիրվող տարիներին որևէ փոփոխության չի ենթարկվել և ի տարբերություն դաշտավայրային շրջանների, սրանցում դիտարկվում է տնային և գյուղացիական տնտեսությունների քանակի աննշան շեղում:

Հարցման արդյունքները վկայում են, որ դաշտավայրային առաջին երեք համայնքներում անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների հաշվառում չի իրականացվում: Նշված համայնքներում գյուղացիական տնտեսությունների ընդհանուր թիվը որոշվում է հողի սեփականաշնորհման վկայական ստացած տնտեսությունների և տնամերձ օժանդակ տնտեսությունների քանակի գումարմամբ: Հուսով ենք, որ 2014 թ. հոկտեմբերին նախատեսված «Գյուղատնտեսական համատարած հաշվառման» իրականացումը և դրա արդյունքների հիման վրա գյուղացիական տնտեսությունների ստեղծվող էլեկտրոնային շտեմարանները թույլ կտա վերջիններս դասակարգել ըստ տնտեսության վարման նպատակի, հողատեսքերի տեսակների և չափերի, գյուղատնտեսական կենդանիների տեսակների և գլխաքանակի, ինչպես նաև գյուղացիական տնտեսության համախառն եկամտի մեջ եկամտի հիմնական աղբյուրի տեսակարար կշռի և

այլն: Մինչդեռ առաջին համայնքում 2013 թ. հողագործությամբ զբաղվել են տնտեսությունների 51,7%-ը, երկրորդում՝ 75,0%-ը, երրորդում՝ 76,9%-ը:

Աղյուսակ 15

Համայնքներում առկա գյուղացիական տնտեսությունների թիվը

	1	2	3	4	5	6–7	8	9	10
2008 թ.	1402	400	715	157	766	264	730	75	122
2009 թ.	1402	400	715	150	768	264	730	75	122
2010 թ.	1402	400	715	148	767	264	730	75	122
2011 թ.	1402	400	715	148	750	264	730	75	122
2012 թ.	1402	400	715	141	757	264	730	75	122
2013 թ.	1402	400	715	135	757	264	730	75	122

Չորրորդ և հինգերորդ համայնքների ղեկավարները նշել են, որ տվյալ համայնքի տնային տնտեսությունները զբաղվել են ինչպես անասնապահությամբ, այնպես էլ հողագործությամբ: Այստեղ ևս գյուղատնտեսական հողերն ամբողջությամբ չեն մշակվում. եթե թիվ չորս համայնքում հողագործությամբ զբաղվել են գյուղացիական տնտեսությունների 64,4%-ը, ապա հինգերորդում՝ 48,9%-ը: Լեռնային շրջանների համայնքներում բոլոր գյուղացիական տնտեսությունները հողագործությամբ զբաղվում են, զուգահեռաբար նաև՝ անասնապահությամբ, թեպետ ոչ բոլորը: Ամեն դեպքում պատկերն այստեղ ավելի բարվոք է այն առումով, որ տնային տնտեսությունների նվազմամբ հանդերձ՝ գյուղացիական տնտեսությամբ զբաղվածների թիվն անփոփոխ է:

Հարցման ենթարկված համայնքների ղեկավարները «ո՞րն է արտագաղթի հիմնական պատճառը» հարցին կարող էին տալ մինչև երեք պատասխան: Ըստ հարցման արդյունքների՝ համայնքների բոլոր ղեկավարներն արտագաղթի հիմնական պատճառը համարել են աշխատատեղերի բացակայությունը, նրանցից 8-ը նշել է նաև բավարար կենսամակարդակ ապահովելու համար անհրաժեշտ գումար վաստակելու անհնարինությունը, 4-ը՝ Հայաստանի զարգացման հեռանկարի բացակայությունը, 3-ը՝ ըստ մասնագիտության աշխատանքի բացակայությունը, 1-ը՝ անարդարությունը, 2-ը՝ ձեռներեցությամբ զբաղվելու դժվարությունները: 9-րդ համայնքի ղեկավարն արտագաղթի պատճառ է համարել հարցաթերթիկում նշված բոլոր տարբերակները՝ առաջնությունը տալով աշխատատեղերի բացակայությանը:

Համայնքների ղեկավարների պատասխանը միգրանտների կողմից հայրենիք ուղարկված դրամական փոխանցումների ծախսի ուղղությունների մասին ունեցել է հետևյալ պատկերը (աղյուսակ 16):

4–10 համայնքներում, ըստ ղեկավարների գնահատման, դրամական փոխանցումների առյուծի բաժինը ծախսվում է ընթացիկ սպառման վրա: Բացառությամբ երկրորդ համայնքի՝ արտերկրում աշխատող մեր հայրենակիցների փոխանցումները ունեն որոշակի ներդրումային ակտիվություն, որն առնչվում է մարդկային կապիտալի զարգացմանն ու բնակարանային շինարարությանը:

Հարցաթերթիկի շրջանակներից դուրս, մեր այն հարցին, թե արտագաղթի կանխման համար ինչ անհրաժեշտ քայլեր է հարկավոր ձեռնարկել, որպեսզի գյուղացին կապվի հողին, համայնքների ղեկավարների մեծ մասի պատասխանն այն էր, որ պետությունը պետք է սուբսիդավորի ոռոգման ջրի վճարները:

Աղյուսակ 16

Դրամական փոխանցումների ծախսման ուղղությունները

	1	*2*	*3*	*4*	*5*	*6–7*	*8*	*9*	*10*
Անձնական սպառման ծախսեր	30	30	20	80	60	70	60	60	70
Կրթության, ուսման ծախսեր	5	-	30	10	15	15	20	10	10
Բնակելի տների կառուցում	-	-	-	-	25	15	20	30	20
Բիզնես ներդրումներ	-	-	-	10	-	-	-	-	-
Վարկեր, պարտքեր	65	70	50	-	-	-	-		-

Իրոք, ըստ ներկա կարգի՝ առվույտի, ցորենի ցանքատարածքների առաջին ոռոգման համար գյուղացիներից գանձվում է 35 հազար դրամ, իսկ հետագա յուրաքանչյուր ոռոգումն արժենում է 20 հազարական դրամ, բանջարաբոստանային մշակաբույսերի ոռոգման համար գյուղացիներն ամեն անգամ վճարում են 13 հազար դրամ: Հաշվի առնելով այն, որ 450 հազար հեկտար վարելահողերից ներկայումս մշակվում են 270 հազարը, ինչը նշանակում է չմշակվող հողերի գյուղատնտեսական նպատակներով օգտագործման պիտանելիության անկում, կարծում ենք, որ պետության կողմից ոռոգման ջրի սուբսիդավորումը միանգամայն իրական և գործուն հնարավորություն է ոչ միայն գյուղը սոցիալ-տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու, այլև մեր երկրի առջև ծառացած պարենային հիմնախնդիրը լուծելու տեսանկյունից: Ավելին, ոռոգման ջրի սուբսիդավորումը կխթանի գյուղացիական վարելահողերի մշակման արդյունավետության բարձրացմանը և հետագայում կունենա մուլտիպլիկացիոն էֆեկտ՝ արդյունաբերական կլաստերների ձևավորման վրա: Գյուղի և գյուղացու հանդեպ հոգատարության, պետական աջակցության պայմաններում միայն հնարավոր կլինի խթանել ներգաղթը: Դա, իր հերթին, կհանգեցնի ազգային անվտանգության աստիճանական ամրապնդմանը:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ՝

- ՀՀ-ից բնակչության զանգվածային արտագաղթը իր բնույթով հարկադրական է և պետականորեն ամենևին չի կարգավորվում կամ շատ թույլ է կարգավորվում: Տագնապահարույց է այն, որ հանրապետության առկա բնակչության էմիգրացիոն ներուժը ոչ միայն սպառված չէ, այլ, ամենայն հավանականությամբ, ունի աճի միտում: Սակայն, մյուս կողմից էլ, պարզ է, որ էմիգրացիոն ներուժը անվերջ աճել չի կարող, քանի որ այդ գործընթացում առավել ակտիվ մասնակցող սեռա-տարիքային առանձին կոհորտաների կառուցվածքային տեղաշարժերը տեղի են ունենում մինչև որոշակի օպտիմալ (որոշ իմաստով՝ նաև կրիտիկական) աստիճանի հասնելը: Այսինքն՝ դա այն իրավիճակն է, երբ արտագաղթը տնտեսական առումով դառնում է ոչ շահավետ. դոնոր երկրի աշխատանքի շուկայի լարվածության մեղմացման հետևանքով նվազում է գործազրկությունը՝ աստիճանաբար հանգեցնելով աշխատավարձերի բարձրացմանը, իսկ ռեցիպիենտ երկրներում աշխատանքի շուկան գերհագեցում է՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:
- 1980–1990-ական թվականների սահմանագլխին Հայաստանում տեղի ունեցած արտակարգ իրադարձությունները, քաղաքական և սոցիալ-տնտեսական արմատական փոփոխությունները իրենց ազդեցությունն են թողել ժողովրդագրական գործընթացների, այդ թվում՝ միգրացիայի վրա: Հասարակական կարծիքը սկզբունքորեն վերագնահատել է էմիգրացիոն վարքագծի նորմերը: Հայրենիքից հեռանալու երևույթն ընկալվում է որպես ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակից, անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտից, անարդարությունից, ինչպես նաև մոտակա հեռանկարում անհատի ինքնաիրացման հնարավորության ընդլայնման հույսի բացակայությունից ձերբազատվելու միակ հասանելի միջոցը:
- Բնակչության արտաքին միգրացիոն ակտիվությունը հասել է այն սահմանին, որ Հայաստանի ներկայիս ժողովրդագրական իրավիճակը որոշվում է գլխավորապես ոչ թե բուն ժողովրդագրական գործընթացներով (ծնելիություն, մահացություն, ամուսնություն, ամուսնալուծություն), այլ արտաքին միգրացիայով: Այս երևույթը, մյուսների հետ մեկտեղ, ուժեղացնում է հասարակության բևեռումը՝ դուրս մղելով միջին խավը:
- Էմիգրանտների մեծ մասը տնտեսական միգրանտներ են, որոնք Հայաստանից մեկնում են աշխատանք և դրամական միջոցներ որոնելու: Կարելի է նաև նշել, որ էմիգրացիան մինչ օրս ՀՀ բնակչության համար գոյատևման և ինքնապահպանման կարևորագույն գործոններից մեկն է:

- Ակնհայտ է, որ, կանխորոշելով բնակչության թվաքանակի սրընթաց նվազումը, սեռատարիքային, ամուսնաընտանեկան, տարաբնակեցման, կրթական և մասնագիտական համամասնությունների ձևախախտումը՝ Հայաստանից ներկայիս արտագաղթը վերաճել է մնացած ժողովրդագրական փոփոխականների վրա ազդող էական գործոնի: Դրանք արդեն իսկ զգալի, որպես կանոն, բացասական ներդրում են ունեցել վերջիններիս շարժի մեջ:
- Հետազոտության արդյունքներով վերահաստատվեց, որ էմիգրացիոն ներուժը մարզերի կտրվածքով միջինից բարձր է Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի, Շիրակի մարզերում և Երևանում: Հետաքրքիր է, որ եթե Շիրակում և Վայոց Ձորում արտագաղթելու մտադրություն ունեցողների մեծաթիվ լինելը պայմանավորված է օբյեկտիվ հանգամանքներով (աշխատատեղերի բացակայություն, անօթևաններ, սոցիալական ծանրագույն պայմաններ), ապա Երևանում, Կոտայքի և Սյունիքի մարզերում իրավիճակը համեմատաբար բարվոք է (արդյունաբերական, առևտրային, գյուղատնտեսական մթերքների վերամշակման ձեռնարկությունների առկայություն), ուստի արտագաղթելու մտադրությունը չենք կարող հիմնավորել միայն սոցիալ-տնտեսական գործոններով: Էմիգրացիոն ներուժը շարունակում է բարձր մնալ քաղաքային բնակչության շրջանում, աշխատանքային միգրանտների թվաքանակում բարձր է տղամարդկանց տեսակարար կշիռը: Թեպետ նախորդ հետազոտությունների արդյունքների հետ համեմատելիս նկատվում է տղամարդկանց բաժնի նվազում, դա, սակայն, բացատրվում է ընտրանքի մեթոդաբանության տարբերությունով:
- Արդեն նշվել է, որ սույն հետազոտությունում տեղեկություններ են հավաքագրվել նաև ամբողջ ընտանիքով մեկնածների վերաբերյալ, որոնց կազմում տղամարդկանց և կանանց տեսակարար կշիռները գրեթե հավասար են, ինչն էլ, վերջին հաշվով, մեծացնում է էմիգրացվածների կազմում կանանց բաժինը: Ըստ վերջին մարդահամարի՝ միջմարդահամարային ժամանակահատվածում (2001–2011թթ.) բնակչության թվաքանակի՝ միգրացիոն շարժով պայմանավորված նվազման մեջ սեռային հարաբերակցությունը 55/45-ի է՝ հօգուտ տղամարդկանց: Գտնում ենք, որ միգրացիային նվիրված հետագա հետազոտությունների դիտարկման օբյեկտը ձևակերպելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել ընտանիքով մեկնածների համախմբին: Ավելորդ չէ նշել նաև, որ 2002–2007 թթ. ընթացքում մեկնածների մեջ տղամարդկանց բաժինը 78.5% էր:
- Սույն հետազոտությունը փաստում է մեկ այլ՝ միջազգային տնտեսագիտության մեջ ամրագրված օրինաչափություն, այն է՝ ավելի հեռավոր զարգացած տարածաշրջաններ կամ երկրներ միգրանտները տեղափոխվում են ընտանիքներով և կայացնում մշտապես բնակվելու որոշում: Այդպիսիք են

Եվրոպական երկրներ էմիգրացվածների 73,1%-ը, ԱՄՆ և Կանադա էմիգրացվածների 77%-ը:

- Էմիգրանտների մեկնման նպատակների մեջ շեշտակիորեն առանձնանում է աշխատանքի որոնումը՝ 76,8%, ինչը նշանակում է, որ հետազոտված էմիգրանտների ամբողջ համակցությունում հենց այդքանն են աշխատանքային միգրանտներ: Դա համահունչ է համաշխարհային միգրացիոն հոսքերում դրսևորված պատկերին՝ 74%:
- Նկատելի է այն օրինաչափությունը, որ աշխատանքային միգրացիայի բաժինը ժամանակի ընթացքում հետզհետե աճում է, իսկ մշտական միգրացիայինը՝ նվազում: Դա բացատրվում է նրանով, որ աշխատանքային (բնույթով ժամանակավոր) միգրանտների կեսից ավելին, առաջին անգամ մեկնելուց մոտ 5–6 տարի անց, արտերկրում իրենց կարգավիճակը վերափոխում են մշտականի:
- Արտագաղթի անմիջական պատճառը, որպես կանոն, այն հակասությունն է, որ կա, մի կողմից՝ անհատի զարգացման մակարդակի, պահանջմունքների և հնարավորությունների, մյուս կողմից՝ դրանք բավարարելու պայմանների միջև: Հավանական էմիգրանտի մեջ աստիճանաբար ձևավորվում է այն համոզմունքը, որ այդ հակասությունը հնարավոր է հանգուցալուծել միայն պետական սահմանները հատելու միջոցով: Հետազոտության արդյունքները վերստին հաստատեցին, որ Հայաստանից արտագաղթի պատճառներից հիմնականները կապված են զբաղվածության հիմնախնդիրների, ներառյալ ինչպես ընդհանուր առմամբ աշխատատեղերի, այնպես էլ ըստ մասնագիտության աշխատանքի բացակայության, և ամենակարևորը՝ արժանավայել ապրուստ ապահովող վարձատրությամբ աշխատատեղերի պակասի հետ: Երկրորդ ուշագրավ փաստը հասարակական վստահության, Հայաստանի զարգացման հեռանկարի, կամ, որ նույն է, ապագայի հանդեպ հավատի հողմահարման՝ առավել քան տագնապահարույց երևույթի առկայությունն է: Միայն այս կերպ կարող է մեկնաբանվել Հայաստանի զարգացման հեռանկարի բացակայության արտագաղթածին այս գործոնի եռապատկումը 2008–2013 թթ. ընթացքում, իսկ էմիգրանտների թվաքանակի համեմատ՝ քառապատկումը: Ստացված արդյունքները խիստ մտահոգիչ են, հատկապես այն առումով, որ որպես Հայաստանի զարգացման ուղիներից մեկը, ըստ որոշ մասնագետների, սփյուռքի տնտեսական կարողությունների, նաև մարդկային ռեսուրսների լայնածավալ ներգրավումն է, կամ, այսպես կոչված՝ «մեծ վերադարձի» կազմակերպումը: Մեր կարծիքով, դեռ վաղաժամ է նման հույս փայփայելը, քանի դեռ Հայաստանում շարունակվում է արտագաղթը, և չեն հաղթահարվում այն ծնող պատճառները:

- Զբաղվածության ընդհանուր կառուցվածքում բարձրորակ մասնագետների բաժինը տնտեսության ինովացիոն ներուժի ինդիկատորն է: Համաշխարհային բանկի՝ 33 երկրներում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ միջին հաշվով հայրենիքից հեռանում է բարձրագույն կրթություն ունեցող քաղաքացիների 10%-ը: Ըստ մեր հետազոտության արդյունքների ուսումնասիրվող տարիներին միգրացվածների մոտ 40%-ն ունի բարձրագույն կրթություն, իսկ բարձրորակ էմիգրացված մասնագետների տեսակարար կշիռը 63.7% է[21]: Մտավոր էմիգրացիան կարելի է բնորոշել որպես ուղեղների վատնում: Գոյություն ունի այն կարծիքը, որ բարձրորակ մասնագետների արտահոսքը խանգարում է, խաթարում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ունակությունը, ինչը հանգեցնում է բնակչության կենսամակարդակի անկմանը:
- Ըստ կատարված հետազոտության՝ միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցողները հիմնականում կողմնորոշված են դեպի Ռուսաստան և ԱՊՀ այլ երկրներ, որտեղ նրանք ներգրավվում են բարձր որակավորում չպահանջող աշխատանքում (շինարարություն, բեռնափոխադրումների իրականացում և այլն), մինչդեռ բարձրագույն կրթություն և բարձր որակավորում ունեցողները կողմնորոշվում են հիմնականում դեպի զարգացած երկրներ, ինչպես, օրինակ, ԱՄՆ, Կանադա և ԵՄ երկրներ, ինչը նշանակում է, որ նրանց մեկնումը կրում է երկարատև կամ մշտական բնույթ, ընդ որում՝ ընտանիքի անդամների հետ: Սա Արևմուտքի երկրների կողմից «ուղեղների ներգրավման» քաղաքականության շարունակականության դրսևորումն է:
- Լայն տարածում ստացած, գուցե նաև մի շարք երկրների փորձով հաստատված պատկերացումն այն մասին, որ միգրացիան ունի էապես դրական տնտեսական հետևանքներ դոնոր երկրների համար՝ աճող դրամական հոսքերի առումով, մեր հետազոտության արդյունքներով, կարծեք թե հերքվում է: Ընդ որում՝ պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ դրամական փոխանցումները բավական զգալի են արտասահման մեկնած հայ գործատուների կողմից, ինչը նշանակում է, նախ այն, որ գործարար ձիրքով օժտված անձինք նախընտրում են բիզնեսով զբաղվել այլ երկրներում, որի հետևանքով ոչ միայն տեղի է ունենում կապիտալի արտահոսք, այլ նաև կառավարման ու կազմակերպական ունակությունների «փախուստ»: Եվ երկրորդ, պրոֆեսիոնալները ձգտում են ոչ միայն դեպի կապիտալը, այլ տեղաշարժվում են կապիտալով: Սա նույնպես հաստատում է, որ Հայաստանն ունի խնդիրներ կապված գրավիչ, արդյունավետ բիզնես

[21] Բարձրորակ կադրերի մեջ ներառվում են հետբուհական, բուհական, միջին մասնագիտական կրթություն ունեցողները, ինչպես նաև ուսանողները (թերի բարձրագույն):

միջավայրի ձևավորման հետ: Հակառակ դեպքում՝ անհասկանալի է, թե ինչու ներքին ներդրումների սղության, օտարերկրյա ներդրումների հսկայական կարիքի պայմաններում մեր երկրից տեղի ունի դրամական միջոցների արտահոսք:

- Դրամական փոխանցումներ կատարում են հիմնականում 1–3 տարվա ընթացքում հայրենիք վերադառնալու մտադրություն ունեցող էմիգրանտները՝ 81,7%, և ի վերջո վերադառնալու մտադրություն ունեցողները՝ 63,9%: Չվերադառնալու կամ հավանաբար չվերադառնալու մտադրություն ունեցողների համախմբերից դրամական փոխանցումներ կատարում են համապատասխանաբար 37,7%-ը և 50,4%-ը: Այլ խոսքով՝ միգրանտների վերադառնալու մտադրությունը հակադարձ համեմատական է նրանց կողմից դրամական փոխանցումներ կատարելուն: Արտերկրում առնվազն մեկ միգրանտ ունեցող ՀՀ տնային տնտեսությունների 56,1%-ը չեն կարողանում բավարարել իրենց կենսական պահանջմունքներն առանց տրանսֆերտների: Սա, կարծում ենք, տնտեսական անվտանգության տեսանկյունից բավական լուրջ խնդիր է:

Հայաստանի Հանրապետության միգրացիոն իրավիճակի բարելավման առաջնահերթ քայլերը կարող են լինել՝

- Միգրացիոն քաղաքականության կողմնորոշիչների հստակեցում և դրանց հետևողական արտացոլում ընդունվող օրենքների, ծրագրերի, որոշումների մեջ: Դրա համար միգրացիոն քաղաքականությունը պետք է դուրս բերվի պասսիվ տիրույթից՝ անցում կատարելով ակտիվ գործողություններին: Այլ խոսքով, միգրացիոն գործընթացներին առնչվող երևույթների սոսկ գնահատողի դերից հրաժարվել և դառնալ միգրացիոն գործընթացները կարգավորող՝ ի շահ ՀՀ տնտեսական և ժողովրդագրական զարգացման: Միգրացիոն քաղաքականությունը պետք է դառնա ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման կողմնորոշիչը: Հաշվի առնելով արտաքին միգրացիայի կարևորությունը՝ (ինչպես ներկայում, այնպես էլ ապագայում) անհրաժեշտ է մշակել միգրացիայի պետական կարգավորման և վերահսկման գործուն մեխանիզմ, որը հնարավորություն կտա արտերկրում պաշտպանել էմիգրանտների իրավունքներն ու սոցիալական շահերը և որոշակի դրամական միջոցներ մուտքագրել պետական բյուջե:

- Հայաստանի առջև ծառացած է բավական լուրջ երկընտրանք. կա՛մ շարունակում է բնական պաշարների շահագործման կուրսը, որպես տնտեսական զարգացման և համաշխարհային տնտեսությանը ինտեգրվելու իր ռազմավարական ուղղություն, կա՛մ չհրաժարվելով տնտեսական զարգացման որդեգրած ռազմավարությունից՝ ապավինում է գիտության և գիտատեխնիկական առաջընթացին և բարձրորակ կադրերին: Տնտեսու-թյան ժամանակակից մրցակցային առավելությունները, դրա արդիակա-նացման

հնարավորությունները որոշվում են երկրում կուտակված մտավոր ներուժով, այսինքն այն ռեսուրսներով որոնք շարունակում են մնալ մեր երկրի մրցակցային առավելությունները բնութագրող հիմնական գործոնը: Հնարավոր չէ գտնել ուղեղների արտահոսքը կանխող որևէ նոր «դեղամիջոց», քան պետության տնտեսական քաղաքականությունն է՝ ուղղված տնտեսության նորագույն ճյուղերի, նոր տեխնոլոգիական կենտրոնների ձևավորմանը: Հայաստանը կարող է, գոնե տարածաշրջանում, մրցակցել բարձրորակ աշխատուժի, հատկապես ինժեներային կադրերի մրցակցային առավելություններով, քանի որ եթե գիտնականը հետազոտում է այն, ինչը գոյություն ունի, ապա ինժեները ստեղծում է այն, ինչը երբևէ չի եղել: Իսկ դա նշանակում է գիտատար պատրաստի արտադրանքի արտադրության զարգացում, քանի որ դրանք ունեն կայուն և ընդլայնվող մատակարարման շուկաներ:

- Միգրացիայի արժանահավատ հաշվառումը բարդ խնդիր է գրեթե բոլոր երկրների համար, ուստի այս հարցում պետական վիճակագրական մարմինները պետք է համագործակցեն՝ փոխլրացնելով բնակչության տեղաշարժի վերաբերյալ տեղեկատվության ստացման հնարավոր բոլոր աղբյուրները:
- Երկրի ժողովրդագրական զարգացման հիմնախնդիրները դյուրին չեն, ուստի այս ոլորտում սոցիալական և տնտեսական ամեն մի որոշում խորը հիմնավորման կարիք ունի, իսկ նման որոշումներ ընդունողները և կենսագործողները իբրև նախապայման պետք է ունենան ժողովրդագրական գրագիտություն: Ահա թե ինչու որոշ մասնագիտությունների (տնտեսագիտություն, կառավարում, իրավագիտություն, հոգեբանություն, լրագրություն, բժշկություն և այլն) կրթական ծրագրերում անհրաժեշտ է ներառել «ժողովրդագրություն» առարկան՝ թեկուզ ընտրովի դասընթացի հիմունքով:
- Ինչպես ողջ քաղաքակիրթ աշխարհում, Հայաստանում ևս ժողովրդագրական գործընթացների կարգավորումը պետք է լինի պետության և հասարակության կարևորագույն խնդիրներից մեկը: Ուստի ժամանակն է մշակել նոր, արդի պայմաններին համապատասխանող ժողովրդագրական քաղաքականություն, որը հնարավորություն կընձեռնի համարժեքորեն արձագանքելու ժողովրդագրական մարտահրավերներին, նաև, թեկուզ մասնակիորեն, վերականգնելու կորցված բարենպաստ դիրքերը:
- Համոզված ենք, որ ժամանակն է ստեղծելու մի գործադիր մարմին, որ լիազորված կլինի անդրադառնալու ժողովրդագրական բոլոր հիմնահարցերին և պատասխանատու կլինի դրանց լուծմանը վերաբերող պետական մոտեցումների առաջարկման և մշակման, համապատասխան միջոցառումների կենսագործման համակարգման ու ընթացքի վերահսկման համար:

Հաշվի առնելով, որ ներկայումս հայաստանյան 450 հազար հեկտար վարելահողերից մշակվում են ընդամենը 270 հազարը, ինչը նշանակում է

չմշակվող հողերի գյուղատնտեսական նպատակներով օգտագործման պիտանելիության անկում, կարծում ենք, որ ոռոգման ջրի պետական սուբսիդավորումը միանգամայն իրական և գործուն հնարավորություն է ոչ միայն գյուղը սոցիալ-տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու, այլև երկրի պարենային հիմնախնդիրն արդյունավետորեն լուծելու տեսանկյունից: Ավելին, ոռոգման ջրի սուբսիդավորումը կխթանի գյուղացիական վարելահողերի մշակման արդյունավետության բարձրացումը և հետագայում այն կունենա մուլտիպլիկացիոն էֆեկտ արդյունաբերական կլաստերների ձևավորման վրա: Դա, իր հերթին, կհանգեցնի ազգային անվտանգության աստիճանական ամրապնդմանը:

1. Եգանյան Ռ., Կույումջյան Կ. Ետխորհրդային, Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները, Երևան 2004:
2. Կարապետյան Ս. Ա., Եգանյան Ռ. Ս., Շահնազարյան Ն. Վ., Հայաստանի բնակչության միգրացիան ետխորդային ժամանակահատվածում, UNFPA, Երևան, 1996:
3. Սարգսյան Հ., Անտոնյան Ք., Խաչատրյան Կ., Միգրացիա. միտումներ, հետևանքներ, հեղինակային հրատարակություն, Երևան, 2013:
4. Ձեկույց ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության, ՀՀ ԱՎԾ, 2002:
5. Հայաստանի բնակչության 1991–1998 թթ. արտաքին միգրացիոն գործընթացների հետազոտություն, ՀՀ Վիճակագրության նախարարություն, TACIS, Եվրոստատ, Երևան, 1999:
6. ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2008թ
7. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2013:
8. Միգրանտների կողմից Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումներ, Երևան, 2009:
9. International labour migration. A rights-based approach, Geneva, International Labour Office, 2010.
10. http://esa.un.org/

Հետազոտական խմբի ղեկավար՝
ՋՈՅԱ ԱՂՎԱՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր

Հետազոտական խմբի կազմը՝
ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ԼՈՒՍԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու

Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ

Աշխատանքային միգրացիան աշխարհում ներկայումս ամենանշանակալից միգրացիոն հոսքերից մեկն է: Միացյալ ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական հարցերի վարչության տվյալներով՝ 2013 թ. միջազգային միգրանտների ընդհանուր թիվը 232 մլն է, որի 74%-ը աշխատանքային միգրանտներ են, այնինչ 2010 թ. 214 մլն միգրանտների 90%-ն էր լքել հայրենի բնակավայրը աշխատելու նպատակով: Վերջին տասնամյակների ընթացքում, ինչպես ընդունված է ասել, տրանսֆորմացիոն երկրներում շարունակաբար իրականացվող քաղաքական, տնտեսական և սոցիալական խորը, հաճախ նաև արմատական բարեփոխումները, իսկ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո նաև զարգացած երկրներում սոցիալ-տնտեսական գործընթացները, հանգեցրին հասարակական կյանքի արմատական վերափոխումների, ինչն էլ դարձավ բնակչության, հատկապես՝ նրա աշխատունակ մասի միգրացիոն նոր ալիքի ձևավորման շարժառիթ: Միգրացիոն գործընթացնի տեղի ունեցող որակական փոփոխությունները լրացվել են նոր գծերով. եթե նախկինում ուղեղների ներգրավման օջախներ էին առավելապես զարգացած երկրները, ապա այժմ զարգացող երկրները ևս ձգում են խելոքներին:

Աշխատանքային միգրացիայի հանրային աճող նշանակությունն էլ հենց կարևորում է դրա տեսամեթոդաբանական իմաստավորման, տարածքային տեղաշարժի քանակական աճի, ինչպես նաև հարակից որակական փոփոխությունների, միգրացիոն գործընթացի ընդհանուր օրինաչափությունների և առանձնահատկությունների բացահայտման, համակարգային ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Իրականացված հետազոտության արդիականությունը պայմանավորված է հատկապես վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունից բնակչության տարերային արտագաղթի, ոչ օրինական աշխատանքային միգրացիայի աճող տեմպով, որը ծնում է բազմաթիվ սպառնալիքներ, այդ թվում՝ որակյալ աշխատանքային ռեսուրսների կորուստ, ժողովրդագրական վիճակի վատթարացում, ազգային անվտանգության խաթարում՝ կապված սահմանամերձ բնակավայրերից բնակչության աննախադեպ արտագաղթի հետ: Պարզորոշ և հստակ չէ նաև ՀՀ միգրացիոն քաղա-

քականությունը՝ հատկապես ոչ օրինական միգրացիայի, աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանվածության, գործատուների և միգրանտների բավարար տեղեկացվածության առումով:

ՀՀ բնակչության որակական և քանակական բնութագծերի վրա ընդհանրապես, իսկ աշխատանքային ռեսուրսների վրա մասնավորապես, արտագաղթի ազդեցությունը միանշանակ գնահատել հնարավոր չէ: Եթե արտագաղթը դիտարկենք որպես աշխատանքի ներքին շուկայի լարվածությունը թուլացնող գործոն, ապա սոցիալ-տնտեսական զարգացման արդի փուլում բարձր որակավորում ունեցող մասնագետների և բանվորական ներուժի կորուստը տեսանելի ապագայում կարող է հանգեցնել մարդկային կապիտալի չբավարարվող պահանջարկի լուրջ հիմնախնդրի: Բնակչության զանգվածային արտագաղթի երկրներում մարդկային կապիտալի կորստի «համարժեքը», կարծեք թե, դառնում են միգրանտների դրամական փոխանցումները դեպի հայրենիք:

Անշուշտ, հատկապես նոր շուկաներ ձևավորող երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մեջ աշխատանքային միգրանտների դրամական փոխանցումներն էական և բավական ակտիվ դեր են խաղում: Որպես սոցիալ-տնտեսական զարգացման գործոն՝ բնակչության դրամական փոխանցումներն իրենց կարևորությամբ արտաքին ֆինանսավորման երկրորդ աղբյուրն են՝ ուղղակի ներդրումներից հետո: Դրանք հսկայական ազդեցություն ունեն աշխատանքի ներքին շուկայի, անձնական սպառման, ներմուծման, պետական բյուջեի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների այլ ոլորտների վրա: Վերջին հաշվով դա խթանում է, որպեսզի արտասահմանից ստացված եկամուտները հայրենիքում ծախսվեն սպառման ավելի առաջադիմական և քաղաքակիրթ ձևերի վրա, իսկ հետագայում նաև բարձրացնեն դրանց ներդրումային ակտիվությունը:

Ուստի իրականացված հետազոտության նպատակը աշխատանքային միգրացիայի ժողովրդագրական, սոցիալտնտեսական, հետևանքների, միգրացիայի դրդապատճառների, մեկնման նպատակի, միգրանտների դրամական փոխանցումների օգտագործման ուղղությունների ուսումնասիրությունն է, ինչպես նաև ՀՀ 2008–2013 թթ. արտաքին միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ պաշտոնական վիճակագրության հրապարակած տվյալներին զուգահեռ՝ օբյեկտիվ, անաչառ և հնարավորինս հավաստի գնահատականների ստացումը:

Руководитель исследовательской группы
ЗОЯ АГВАНОВНА ТАДЕВОСЯН
доктор экономических наук

Состав исследовательской группы
КАРЕН АКОПЯН
кандидат экономических наук, доцент
ДИАНА ГАЛОЯН
кандидат экономических наук, доцент
ЛУСИНЕ АГАДЖАНЯН
кандидат экономических наук

Внешняя трудовая миграция: оценки и раздумья

Трудовая миграция в настоящее время является наиболее значительным миграционным потоком в мире. По данным Департамента ООН по экономическим и социальным вопросам в 2013 году, общее число международных мигрантов составило 232 млн. человек, из которых 74% трудовые мигранты, в то время как в 2010 году, из числа 214 миллионов мигрантов 90% покинули свои дома с целью найти работу.

В течение последнего десятилетия, в так называемых «трансформационных» странах, непрерывно реализуемые политические, экономические и социальные глубокие, зачастую радикальные реформы, а после финансового кризиса и социально-экономические процессы в развитых странах привели к радикальным изменениям в общественной жизни. Это и стало мотивацией формирования новой волны миграции населения и особенно ее трудоспособной части.

Качественные изменения в процессе миграции были дополнены новыми чертами. Если прежде центрами притяжения “мозгов” являлись в основном развитые страны, то в настоящее время развивающиеся страны также притягивают “умы”. Именно растущая социальная значимость трудовой миграции обусловливает необходимость системного исследования и выявления общих закономерностей и особенностей теоретико-методологического понимания, количественного роста территориальных передвижений, а также сопутствующие качественные изменения миграционных процессов.

Актуальность проведенного исследования обусловлена повышением темпов стихийной миграции населения, нелегальной трудовой миграции из Республики Армения, особенно в последние годы, что рождает множество угроз: включая потерю квалифицированных трудовых ресурсов, ухудшение демографической ситуации, подрыва национальной безопасности государства, в связи с беспрецедентной эмиграцией населения из приграничных селений. Миграционная политика также неопределенная и размытая, особенно с точки зрения нелегальной миграции, социальной защиты трудовых мигрантов, достаточной информированности работодателей и работников.

Влияние миграции на качественные и количественные параметры населения РА в целом, и на трудовые ресурсы в частности, однозначно оценить невозможно.

Если эмиграцию рассмотреть как фактор, расслабляющий накаленность внутреннего рынка труда, то, на современном этапе социально-экономического развития, потеря потенциала высококвалифицированных специалистов и рабочих в обозримом будущем может создать серьезную проблему не удовлетворяющегося спроса на человеческий капитал. В странах массовой эмиграции населения “эквивалентом” потерь человеческого капитала становятся денежные переводы мигрантов.

Конечно, денежные переводы мигрантов играют существенную и достаточно активную роль, особенно в странах, формирующих новые рынки в процессе социально-экономического развития. Денежные переводы населения по степени важности, как социально-экономический фактор развития, после прямых инвестиций являются вторым источником внешнего финансирования. Они имеют огромное влияние на внутренний рынок труда, частное потребление, импорт, государственный бюджет и на другие сектора социально-экономических отношений. В конечном счете, это способствует, чтобы доходы, полученные из заграницы, на родине расходовались на более прогрессивные и цивилизованные виды потребления, а в дальнейшем также увеличивали инвестиционную активность.

Таким образом, целью данной научно-исследовательской работы является изучение демографических и социально-экономических последствий, причин и целей трудовой миграции, направлений использования денежных переводов мигрантов, а также получения объективных, беспристрастных и по возможности достоверных оценок параллельно данным, опубликованным официальной статистикой по внешним миграционным передвижениям на период 2008–2013 гг.

Head of research team
TADEVOSYAN ZOYA AGHVAN
Doctor of Economics

Members of research team
KAREN HAKOBYAN
PhD in Economics, Associate professor
DIANA GALOYAN
PhD in Economics, Associate professor
LUSINE AGHAJANYAN
PhD in Economics

External Labor Migration: Evaluations and Thoughts

Labour migration currently is the most important migratory flow of the world. According to the UN Department of Economic and Social Affairs, in 2013 the total number of international migrants reached 232 million, of which 74% are labor migrants, while in 2010, out of 214 million migrant workers 90 % had left their homes in order to find a job.

During the past decade, in socalled transition countries continuously implemented political, economic and social deep, often fundamental reforms, and after the financial crisis and the socio-economic processes in the developed countries, have led to radical changes in social life. This was the motivation for the formation of a new wave of migration, particularly for its working-age part.

The qualitative changes in the migration process have been enhancing with some new features. If at first the developed countries were the main centers of attraction for "brains", then now, the developing countries also attract “minds”. It is the growing social significance of labor migration, which necessitates system research and identify of common patterns and characteristics of theoretical and methodological understanding, quantitative growth of territorial movements and the accompanying qualitative changes of migration processes.

The relevance of the study is due to an increased rate of spontaneous migration of population, illegal labor migration in the Republic of Armenia, especially in recent years, which creates many threats. These feats include the loss of skilled human resources, the deterioration of the demographic situation and undermine of the national security of the state, due to the unprecedented emigration of the population from the border villages. Migration policy is not clear and distinct either, especially in terms of illegal migration, social protection of migrant workers, sufficient awareness of employers and employees.

On the qualitative and quantitative parameters of RA population as a whole, and for labor resources in particular, to assess the impact of migration unambiguously is not possible. If considering the emigration as a factor relaxing the tense in internal labor market, then at the present stage of social and economic development, the loss of potential of highly skilled professionals and workers, in the near future may cause a serious problem of unsatisfied demand for human capital. In a country of mass emigration, "the equivalent” of the loss of human capital, become migrant remittances.

Of course, especially in countries forming new markets in the process of socio-economic development, remittances play an important and active enough role. As a factor of socio-economic development, remittances of population in the order of importance, come second after direct investments, as a source of external financing. They have a huge impact on the domestic labor market, private consumption, imports, the state budget and other sectors of socio-economic relations. Ultimately, this contributes so that incomes received from abroad were spent at home on more progressive and civilized forms of consumption, and in the future increased investment activity.

Thus, the aim of this research is to study the demographic and socio-economic consequences, causes and purposes of labor migration, the directions of use of remittances. We also aim to obtain objective, impartial and possibly reliable estimates, in parallel with data published by official statistics on external migration movements for the period 2008–2013.

«ԱՄԲԵՐԴ» ՄԱՏԵՆԱՇԱՐ 4

Հետազոտական խմբի ղեկավար՝
ՋՈՅԱ ԱՂՎԱՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, դոցենտ

Հետազոտական խմբի անդամներ՝
ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱ

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Խմբագիր՝ ***Վ. Միրզոյան***
Տեխնիկական խմբագիր՝ ***Ն. Խչեյան***

Էջադրումը և սրբագրումը՝ ***Ռ. Պետրոսյանի***
Ձևավորումը՝ ***Ն. Խչեյանի***

Չափս՝ 70×108 1/16:
5 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37